Մրցակցության
Պաշտպանության Հանձնաժողով

ՀԱՂՈՐԴՈՒՄ

2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ 5

2 ԿԱՐԵՎՈՐԸ՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ 7

3 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 8

4 2024 ԹՎԱԿԱՆԸ ԹՎԵՐՈՎ 13

5 ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

5.1. Գերիշխող դիրքի, բանակցային ուժեղ դիրքի չարաշահումներ և հակամրցակցային համաձայնություններ 17

5.2. Պետական գնումների մշտադիտարկում 21

5.3. Համակենտրոնացումներ և պետական օժանդակություն 24

5.4. Անբարեխիղճ մրցակցության վերահսկողություն 28

6 ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 32

6.1. Բենզին, դիզելային վառելիք և ավիավառելիք 34

6.2. Էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների լիցքավորում 36

6.3. Մրգային օղիներ 38

6.4. Վերելակների շրջանառության և տեղադրման ու տեխնիկական սպասարկման ծառայություններ 40

6.5. Ամրաններ 42

7 ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 44

8 ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 47

8.1. Սպառողների շահերի պաշտպանության ոլորտում վարչարարությունը 48

8.2. Օրենսդրական փոփոխություններ՝ սպառողների շահերի պաշտպանության ոլորտում 53

9 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

9.1. Հանձնաժողովի մեթոդաբանական բազայի ամրապնդում 56

9.2. Կրթական ու գիտական համագործակցություն 57

9.3 Մրցակցության շահերի պաշտպանություն և հանրային իրազեկման միջոցառումներ 58

9.4 Միջազգային համագործակցություն 59

10 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆԱ-ՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 68

11 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

11.1. Հանձնաժողովի կողմից պատասխանատվության ենթարկված տնտեսավարող սուբյեկտներն ու պետական մարմինները 71

11.2. Ֆինանսական հաշվետվություն 79

11.3. Հանձնաժողովի կառուցվածքի գրաֆիկ 81

1 ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄՊՀ նախագահ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի համար սպառողների շահերի պաշտպանության համակարգի ձևավորումն ամրագրված էր՝ որպես 2024 թվականի հիմնական առաջնահերթություն, և այս պահին կարող ենք արձանագրել, որ 2024 թվականը Հանձնաժողովի համար կարելի է շրջադարձային համարել հենց սպառողների շահերի պաշտպանության ոլորտում կատարված աշխատանքները հաշվի առնելով:

2024 թվականի ընթացքում **սպառողների շահերի պաշտպանության** համակարգի ստեղծման և կայացման մասով Հանձնաժողովի իրականացրած աշխատանքները բազմաբովանդակ էին: Առաջին հերթին կարիք կա առանձնացնելու օրենսդրական մեծածավալ փոփոխությունների նախաձեռնումը՝ ուղղված սպառողների շահերի պաշտպանության օրենսդրական դաշտի ձևավորմանը: Օրենսդրական փոփոխությունների հիմնական շեշտադրումը կարելի է համարել այն, որ վերջինիս ընդունումից հետո ՀՀ օրենսդրությամբ ներդրվում է **սպառողների իրավունքների ամբողջական համակարգ**՝ ապահովված դրանց պաշտպանության արդյունավետ գործիքակազմով: Մյուս կողմից կարևոր եմ համարում ընդգծել, որ օրենսդրական փոփոխություններով Հանձնաժողովին են վերապահվելու **սպառողների շահերի պաշտպանության կենտրոնական մարմնի լիազորությունները**:

Թվայնացման դարաշրջանում սպառողների շահերի պաշտպանության հասցեական կազմակերպման նպատակով 2024 թվականին Հանձնաժողովը ձեռնամուխ է եղել մշակելու նոր թվային գործիքներ՝ սպառողներին առաջարկելու սեփական շահերի պաշտպանության համար **թափանցիկ, հարմար և արդյունավետ թվային մեխանիզմ**: Սպառողների շահերի պաշտպանության համակարգի զարգացմանը զուգընթաց մենք նախատեսում ենք նաև զարգացնել և ընդլայնել այս թվային գործիքների շրջանակն ու բովանդակությունը՝ միասնական հարթակի ներքո ապահովելով արդյունավետ

հաղորդակցություն թե՛ սպառողների, թե՛ տնտեսավարող սուբյեկտների և թե՛ սպառողների շահերի պաշտպանության հարցում ներգրավված պետական և հասարակական կազմակերպությունների համար:

Հանձնաժողովի այս աշխատանքները կապված են նաև Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով Հայաստանի Հանրապետության համար սահմանված պարտականությունների իրականացման հետ:

Արդեն 2025 թվականին Հանձնաժողովը շարունակելու է հետևողականորեն ի կատար ածել ստանձնած հանձնառությունը՝ Հայաստանի Հանրապետությունում կայացնելու սպառողների շահերի պաշտպանության ամբողջական, արդյունավետ և հասանելի համակարգ:

Մրցակցային միջավայրի զարգացման իմաստով 2024 թվականն առանձնանում էր վարչարարության արդյունավետության աճով, ինչը ապացուցվում է թե՛ իրականացված վարչարարության արդյունքում բացահայտված իրավախախտումների, թե՛ Հանձնաժողովի կողմից այդ բացահայտումների արդյունքնում նշանակված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մուտքագրված տուգանքների ծավալների տարեցտարի աճող ցուցանիշներով: 2024 թվականի դրությամբ նշանակվել է ավելի քան 3 միլիարդ դրամ տուգանք, ինչը աննախադեպ ցուցանիշ է Հանձնաժողովի ավելի քան 20-ամյա գործունեության համար:

Հատուկ կցանկանայի առանձնացնել մատակարարներին ուշ վճարումների հարցով Հանձնաժողովի ձեռքբերումները 2024 թվա-կանին: 2023 թվականն ամփոփելիս մենք խոստացել էինք, որ թե՛ գյուղատնտեսական արտադրանքի մատակարարման, թե՛ առևտրային ցանցերի հետ հարաբերություններն ավելի կարգավորված և վերահսկելի կլինեն 2024 թվականի արդյունքներով: Եվ հիմա մենք կարող ենք արձանագրել, որ եթե 2023 թվականի վերջին գյուղատնտեսական արտադրանքի մատակարումների դիմաց առկա էր 1,6 միլիարդ դրամի պարտք, ապա այս պահին այդ **ամբողջ պարտքը վերադարձվել է գյուղացիներին**: Նույնաբար առևտրային ցանցերի հետ հարաբերություններում 2024 թվականի ընթացքում մատակարարներին է վերադարձվել մի քանի միլիարդ դրամի պարտք: 2025 թվականին Հանձնաժողովը շարունակելու է հետամուտ լինել առևտրային ցանցերի և մատակարարների, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքի մատակարումների հետ կապված հարաբերություններում արդար մրցակցային միջավայրի ապահովմանը և վճարումների կատարմանը:

Ինչ վերաբերում է Հանձնաժողովի՝ 2025 թվականի առաջնահերթություններին, պետք է առանձնացնեմ երեք հիմնական ուղղություն՝ **սպառողների շահերի պաշտպանության համակարգի զարգացումը, պետական գնումների համակարգում մրցակցային միջավայրի բարելավումը և սպառողների շահերի պաշտպանության թվային գործիքակազմի ստեղծումը:**

2 ԿԱՐԵՎՈՐԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Ո՞Վ ԵՆՔ ՄԵՆՔ

Մրցակցության պաշտպանության **հանձնաժողովն ինքնավար մարմին է՝** կազմված 7 անդամից (նախագահ և վեց անդամ), որոնց նշանակում է **Ազգային ժողովը**:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆՈՒՄ

Հանձնաժողովն ապահովում է տնտեսական գործունեության **ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը**, բարեխիղճ մրցակցության և ձեռնարկատիրության զարգացման համար **անհրաժեշտ միջավայրը** և իրականացնում է **սպառողների շահերի պաշտպանություն:**

Հանձնաժողովի գործունեության գլխավոր նպատակակետը ազատ տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության **ապահովումն է տնտեսության զարգացման և երկրի առաջընթացի համար:**

3 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ՈՒՆԻ 86 ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ

- **61** Քաղաքացիական ծառայողներ
- **11** Հայեցողական պաշտոններ
- **7** Ինքնավար պաշտոններ
- **7** Ընդհանուր մասնագիտություն ունեցողներ և տեխնիկական սպասարկում իրականացնողներ

13 Միացել են

8 Հեռացել են

Իգական **67%**

Արական **33%**

Կառուցվածքային ստորաբաժանումներում փաստացի զբաղեցրած ղեկավար պաշտոններ

8 Կին

4 Տղամարդ

Մասնագիտական ստորաբաժանումներ

5 Կին

0 Տղամարդ

Աջակցող ստորաբաժանումներ

Աշխատակիցները ըստ տարիքային խմբերի

- **32%** Մինչև 29տ.
- **23%** 30-39 տ.
- **28%** 40-49 տ.
- **17%** 50-65 տ.

Կրթություն



- Մագիստրոս
- Բակալավր
- Դիպլոմավորված
- Գիտությունների թեկնածու

Մասնագիտություն



- Իրավաբան
- Տնտեսագետ
- Այլ

Հանձնաժողովում աշխատում են՝



- Մինչև մեկ տարի
- 2-5 տարի
- 11-15 տարի
- 6-10 տարի
- 15 և ավել տարի

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Առկա էին

- Համակենտրոնացումների գնահատում
- Գերիշխող դիրքի չարաշահումներ
- Հակամրցակցային համաձայնություններ
- Անբարեխիղճ մրցակցություն
- Պետական գնումների վերահսկողություն

Ավելացել են

2019

- Շուկաների վերլուծություն
- Պետական մարմինների հակամրցակցային գործողություններ
- Պետական օժանդակություն

2023

- Սպառողների շահերի պաշտպանություն

Հանձնաժողովը 2019 թվականից սկսած կատարել է մի շարք բարեփոխումներ՝ ուղղված Հանձնաժողովի կառուցվածքի վերափոխմանը:

Բարեփոխումների նպատակն էր բարձրացնել Հանձնաժողովի ներքին գործընթացների արդյունավետությունը:

Այդ իմաստով վերջին տարիներին հիմնական ջանքերն ուղղված են սպառողների շահերի պաշտպանության համար պատասխանատու առանձին ստորաբաժանման ձևավորմանը:

Գերիշխող դիրքի և պետական մարմինների հակամրցակցային գործողությունների վերահսկողության բաժին

1. Մենաշնորհ, գերիշխող կամ բանակցային դիրքի վերահսկում. ապրանքային շուկայի վրա միակողմանի ազդելու հնարավորություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ վերահսկողություն՝ ապրանքային շուկայում նման սուբյեկտների զբաղեցրած դիրքի շնորհիվ չարաշահումների բացահայտման և կանխարգելման, ինչպես նաև ապրանքային շուկայի մյուս մասնակիցների պաշտպանության նպատակով:

2. Պետական մարմինների հակամրցակցային գործողությունների վերահսկում. պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց այնպիսի գործո-

ղությունների կամ ակտերի նկատմամբ վերահսկողություն, որոնք տնտեսավարող սուբյեկտների համար ստեղծում են խտրական պայմաններ, սահմանափակում են նրանց ձեռնարկատիրական գործունեությունը կամ ապրանքներ ազատ ընտրելու նրանց իրավունքը՝ դրանով իսկ բացառելով ապրանքային շուկայում հավասար պայմաններով մրցակցությունը:

Հակամրցակցային համաձայնությունների և պետական գնումների վերահսկողության բաժին

1. **Հակամրցակցային համաձայնությունների վերահսկում.** տնտեսավարող սուբյեկտների այնպիսի համաձայնեցված գործողությունների նկատմամբ վերահսկողություն, որոնք սահմանափակում են ազատ և արդար մրցակցությունը՝ ապրանքային շուկայի բաժանման և վերահսկման, մրցակիցների դուրսմղման և այլ հակամրցակցային նպատակներով:

2. **Պետական գնումների վերահսկում.** պետական գնումների շրջանակում այնպիսի գործողությունների նկատմամբ վերահսկողություն, որոնք սահմանափակում են թափանցիկ, արդար և արդյունավետ գնման գործընթացները՝ պետական գնման ընթացակարգերին այլ մասնակիցների մասնակցության կանխամտածված սահմանափակման, գների արհեստական բարձրացման, կոնկրետ մասնակցի համար առավելությունների ձեռքբերման և այլ հակամրցակցային նպատակներով:

Համակենտրոնացումների և պետական օժանդակության գնահատման բաժին

1. **Համակենտրոնացումների վերահսկում.** ապրանքային շուկայում խոշոր տնտեսավարող սուբյեկտների գործարքների նկատմամբ վերահսկողություն՝ այդ գործարքների արդյունքում շուկայական իշխանության չարաշահման, սպառողների շահերի վնասման դեպքերի կանխման և առողջ մրցակցային միջավայրի ապահովման նպատակով:

2. **Պետական օժանդակության վերահսկում.** պետության կողմից մասնավոր հատվածին տրամադրվող աջակցությունների թափանցիկության ապահովում և ապրանքային շուկայի վրա դրանց ազդեցության գնահատում՝ ապրանքային շուկայում հավասար մրցակցային պայմանների ապահովման և մրցակցության սահմանափակման դեպքերի կանխարգելման նպատակով:

Տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ մրցակցության վերահսկողության բաժին

Բաժնի հիմնական գործառույթն է տնտեսավարող սուբյեկտների միմյանց նկատմամբ կիրառվող անբարեխիղճ վարքագծի՝ շփոթության առաջացման, անհարկի համեմատության և այլ դրսևորումների նկատմամբ վերահսկողությունը՝ ապրանքային շուկաներում տնտեսավարող սուբյեկտների բարեխիղճ և ազնիվ մրցակցության ապահովման նպատակով:

Սպառողների շահերի պաշտպանության բաժին

Բաժնի հիմնական գործառույթն է սպառողների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ գործողությունների նկատմամբ վերահսկողությունը՝ սպառողին ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ հավաստի տեղեկատվության տրամադրման, ապրանքի քանակի և որակի համապատասխանության ապահովման, մոլորեցնող գովազդների կանխման, կեղծ կամ թաքցված տեղեկությունների բացահայտման նպատակով:

Շուկաների վերլուծության բաժին

Շուկաների վերլուծության բաժնի հիմնական գործառույթը կապված է ոլորտային ուսումնասիրությունների իրականացման հետ, որոնց շրջանակներում բաժինը դիտարկում է ընտրված ոլորտում կամ ապրանքային շուկայում տեղի ունեցող բոլոր գործընթացները՝ միջազգային զարգացումների, Հայաստանում վերջիններիս ազդեցությունը, շուկայի կառուցվածքն ու մասնակիցներին, մրցակցային դինամիկան և այլն: Միաժամանակ, գնահատվում են նաև ոլորտը կամ շուկան կարգավորող օրենսդրական դաշտը՝ դրանում առկա մրցակցությունը կանխող տարրերի բացահայտման իմաստով:

Որպես արդյունք՝ բաժինը քաղաքականություն մշակող պետական մարմնին առաջարկներ է ներկայացնում ոլորտի զարգացման, այդ թվում՝ մրցակցային իրավիճակի լավարկման վերաբերյալ:

2024 ԹՎԱԿԱՆԸ ԹՎԵՐՈՎ

ԿԱՅՔԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ

ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՏՈՒԳԱՆՔԻ ՉԱՓԸ (ԴՐԱՄ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՎԱԾ ՏՈՒԳԱՆՔԻ ՉԱՓԸ (ԴՐԱՄ)

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ



ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ

2024	2023	2022
57	64	54

Իրավախախտման վերաբերյալ վարույթներ		2024	2023	2022
	Հարուցված	277	133	142
	Եզրափակված	285	174	151

Հանձնաժողովի փաստաթղթաշրջանառության մոտ **71%**-ն իրականացվել է թվային գործիքակազմով

1182 Զանգ թեժ գծի միջոցով

Իրավախախտումների շրջանակներում պատասխանատվության ենթարկված տնտեսավարող սուբյեկտներ՝

68 Մրցակցության պաշտպանության մասով

124 Սպառողների շահերի աշտպանության մասով

Ընդունված վերջնական որոշումներ	
Գերիշխող դիրքի չարաշահում	27
Բանակցային ուժեղ դիրքի չարաշահում	8
Հակամրցակցային համաձայնություններ	1
Անբարեխիղճ մրցակցություն	193
Համակենտրոնացումներ	91
Տեղեկատվության ուշ տրամադրում կամ չտրամադրում	26
Հանձնաժողովի որոշումների չկատարում	13
Պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողություն	5
Այլ	46

5 ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

5.1. ԳԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔԻ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՈՒԺԵՂ ԴԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱԿԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աննա Պետրոսյան
Մրցակցության վերահսկողության վարչության պետ

*«Գերիշխող դիրքի և պետական մարմինների հակամրցակցային գործողությունների վերահսկողության բաժինը 2024 թվականին հիմնականում կենտրոնացել է բանակցային ուժեղ դիրքի չարաշահումների, մասնավորապես **գյուղատնտեսական ապրանքների մատակարարների և սուպերմարկետներին մատակարարում իրականացնող անձանց ուշ վճարումների վրա՝** հաշվի առնելով նոր օրենսդրական փոփոխությունները»:*

2024 թվականին Հանձնաժողովը գերիշխող դիրքի, բանակցային ուժեղ դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնությունների ուսումնասիրության շրջանակներում դիտարկել է մի շարք կարևոր ոլորտներ, որոնցից են Հայաստանի Հանրապետությունում վառելիքի, հեռահաղորդակցության, սննդի առաքման ոլորտները:

Հանձնաժողովը իր այս լիազորության շրջանակներում դիտարկել է նաև կարևոր ենթակառուցվածքներ՝ գազամատակարարման համակարգը, էլեկտրական ցանցերը, երկաթուղին: Հարկ է նշել, որ այս տարվանից մեկնարկել են նաև գյուղատնտեսական արտադրանքի մթերման մասով հնարավոր բանակցային ուժեղ դիրքի չարաշահման դեպքերի քննությունները:

Ի գիտություն

Ապրանքային շուկայում բանակցային ուժեղ դիրք ունենալը կապված է այդ շուկայում իր ազդեցության հաշվին **այլ տնտեսավարող սուբյեկտների համար ապրանքի իրացման շուկա մուտքի ապահովման հետ:** Բանակցային ուժեղ դիրքի վառ օրինակ են առևտրային ցանցերը. **4 և ավելի առևտրային օբյեկտ ունեցող և 3 մլրդ դրամ շրջանառությունը գերազանցող** առևտրային ցանցերը համարվում են բանակցային ուժեղ դիրք ունեցող:

Բանակցային ուժեղ դիրքի չարաշահման դեպքերը կարող են ներառել **խտրական պայմանների սահմանումը կամ կիրառումը, ձեռնարկատիրական հարաբերությունների անհիմն դադարեցումը:**

Գյուղատնտեսական արտադրանքի մթերման ոլորտում ուշ վճարումների վերաբերյալ ուսումնասիրություն և վարույթներ

Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել գյուղատնտեսական արտադրանքի մթերման ոլորտում գյուղատնտեսական արտադրանքի դիմաց մթերողների կողմից կատարվող ուշ վճարումները բացահայտելու նպատակով:

2024 թվականի փետրվարի 1-ի և հունիսի 7-ի դրությամբ գյուղատնտեսական արտադրանք մթերողների՝ գյուղատնտեսական արտադրանք մատակարարողների նկատմամբ ունեցած պարտավորությունների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ փետրվարի 1-ի դրությամբ թվով 13 մթերող ունեցել է ավելի քան 1.6 մլրդ դրամի չմարված պարտավորություններ, որոնք, որպես այդպիսին, եղել են ինչպես նախկին տարիների մթերումներից, այնպես էլ 2024 թվականին իրականացված մթերումներից գոյացած պարտավորություններ:

Մինչև նոր օրենսդրական փոփոխությունների ուժի մեջ մտնելը՝ 2024 թ.-ի մայիսի 6-ը, 13 մթերողից 6-ը, Հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքների արդյունքում, ամբողջությամբ մարել են մատակարարների հանդեպ ունեցած բոլոր պարտավորությունները:

Մնացած թվով 7 մթերողները նոր օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 30-օրյա ժամկետում չեն կատարել մատակարարների հանդեպ ունեցած պարտավորությունները, որի առնչությամբ հարուցվել են վարչական վարույթներ օրենքով սահմանված ժամկետում վճարումների չկատարման դրսևորմամբ բանակցային ուժեղ դիրքի չարաշահման առերևույթ առկայության հիմքով:

Վարույթի ընթացքում՝ նախքան վերջնական որոշման կայացումը, մթերողները 2-ից 5 ամսվա ժամանակահատվածում մարել են մատակարարների հանդեպ ունեցած բոլոր պարտավորությունները:

Հատուկ անհրաժեշտ է ընդգծել, որ նշանակված տուգանքների չափերը բխում էին այս կարգավորման օգտագործման առաջին փուլում ավելի մեղմ վարչարարության իրականացման գաղափարից՝ հիմք ընդունելով տնտեսավարող սուբյեկտների հետ համատեղ աշխատանքի հիման վրա գյուղատնտեսական մթերքի մասով պարտքերի կամավոր մարման հնարավորությունը:

7 մթերողի նկատմամբ պատասխանատվության միջոց է կիրառվել

Տուգանքը կազմել է՝ **35 965 000** ՀՀ դրամ

«Յանդեքս Սնունդ» ծառայության շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ վարույթ

Հանձնաժողովը 2022 թվականի նոյեմբերի 8-ին «Յանդեքս Սնունդ Էյէմ», «Յանդեքս. տաքսի Էյէմ», «Ռայդտեխ Ինթերնեյշնլ ԲՎ», «Ֆուդտեք ընդ Դելիվերի ԲՎ», «Յանդեքս Դելիվերի Էյէմ», «Ֆուդ Դելիվեռի1» և «Յանդեքս Եդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների անձանց խմբի վարքագծում գերիշխող դիրքի չարաշահման հատկանիշների առերևույթ առկայության հիմքով հարուցել է վարույթ:

Վարույթի շրջանակում որպես իրավախախտում է որակվել 2022 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի մարտի 1-ն ընկած ողջ ժամանակահատվածում «Յանդեքս Սնունդ» ծառայության շրջանակում ««Յանդեքս Սնունդ Էյէմ», «Ֆուդտեք ընդ Դելիվերի Բ.Վ.», «Յանդեքս Եդա», «Տեխ Սերվիսես», «Ֆուդ Դելիվեռի1» անձանց խմբի կողմից չհիմնավորված ցածր գնի սահմանման և կիրառման, ինչպես նաև այլ տնտեսավարող սուբյեկտներին շուկայից դուրս մղելու առնչությամբ վարքագիծը:

Վարույթի շրջանակում պարզ է դարձել, որ «Յանդեքս Սնունդ» ծառայությունը 2022 թվականի սեպտեմբերից մինչև 2023 թվականի փետրվարը ներառյալ մատուցվել է զգալի ֆինանսական վնասով, որի հետևանքով Անձանց խումբն իր գործողությունների և վարքագծի արդյունքում վեցերորդ ամսում գրավել է Ապրանքային շուկայի ավելի քան 40 տոկոսը: Բացի այդ, անձանց խմբի գործողությունների և վարքագծի արդյունքում այլ տնտեսավարող սուբյեկտներ ստիպված են եղել կատարել լրացուցիչ ծախսեր շուկայից դուրս չմղվելու համար:

2022 թվականի սեպտեմբերից մինչև 2023 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում «Յանդեքս Սնունդ» ծառայության շրջանակում Անձանց խմբի նկատմամբ նշանակել 310 719 612 դրամի չափով տուգանք:

Բենզինի իրացման ոլորտում հակամրցակցային համաձայնության կնքման վերաբերյալ վարույթ

Հանձնաժողովի կողմից իրականացված Վարույթի շրջանակներում արձանագրվել է, որ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի հունիսի 10-ն ընկած ժամանակահատվածում «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ» ընկերությունների, «Մաքս Օիլ» ու «Կամոյլ» ընկերություններ» ընդհանուր առմամբ բենզինի իրացման գները փոփոխել են նույնանման՝ անկախ այն հանգամանքից, որ նրանց ծախսերը միմյանցից էականորեն տարբերվել են: Ընկերությունների անուղղակի հակամրցակցային համաձայնության վարքագիծն առավել վառ դրսևորվել է 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Նրանք միաժամանակ՝ նույն օրը կամ մինչև երկու օրվա տարբերությամբ, բարձրացրել և իջեցրել են ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման գներն այն դեպքում, երբ նրանց ծախսերը միմյանցից տարբերվել են: Ավելին, եղել են դեպքեր, երբ ընկերությունների ինքնարժեքի իջեցումը զուգակցվել է իրացման գնի բարձրացմամբ և հակառակը:

Նշվածի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը 2024 թվականի դեկտեմբերի 10-ին ընդհանուր 1 078 363 000 ՀՀ դրամի չափով տուգանել է բենզին իրացնող 4 խոշոր ընկերությունների հակամրցակցային համաձայնության կնքման համար:

4 բենզին իրացնող խոշոր ընկերություններ տուգանվել են **հակամրցակցային համաձայնության կնքման համար**

Տուգանքը կազմել է՝ **1 078 363 000 ՀՀ դրամ**

5.2. ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Տաթևիկ Հովհաննիսյան
Հակամրցակցային համաձայնությունների և պետական գնումների վերահսկողության բաժնի պետ

«2024 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք ուսումնասիրություններ պետական գնումների միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների վերաբերյալ:

Ուսումնասիրությունների շրջանակներում վեր են հանվել կոնկրետ ոլորտներին վերաբերվող մի շարք հիմնախնդիրներ, որոնք ազդում են գնումների ոլորտում մրցակցության արդյունավետության վրա:

Հանձնաժողովի կողմից ներկայացվել են առաջարկություններ, որոնք ուղղված են մրցակցային միջավայրի բարելավմանը և մի շարք համակարգային խնդիրների լուծմանը՝ ապահովելով ավելի թափանցիկ, արդար և արդյունավետ գնման գործընթացներ»:

Պետական մարմնի հակամրցակցային գործողությունները 2024 թ.-ին

Ընդհանուր վարույթների քանակ	Ընթացիկ վարույթների քանակ	Ավարտված վարույթների քանակ	Նախազգուշացումը որպես պատ. միջոց	Ընդհանուր վարույթների քանակ	Ընթացիկ վարույթների քանակ
4	1	3	2	1	2

Ի գիտություն

Պետական մարմնի հակամրցակցային գործողությունները վերաբերում են պետական մարմինների կողմից իրականացվող ցանկացած գործողություններին, որոնք **վնասում են մրցակցությունը:**
Պետական մարմինների հակամրցակցային գործողություններ են՝ խտրական պայմանների սահմանումը և կիրառումը, **ձեռնարկատիրական գործունեության սահմանափակումը**, այլ պետական մարմինների կամ տնտեսավարող սուբյեկտների կամ դրանց պաշտոնատար անձանց հետ **հակամրցակցային համաձայնությունները** և այլն:

Ծրագրային ապահովման մշակման և ապահովման խորհրդատվական ծառայությունների իրականացման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգերի վերաբերյալ ուսումնասիրություն

Հանձնաժողովը 2024 թվականին իրականացրել է ուսումնասիրություն ծրագրային ապահովման սպասարկման և մշակման ծառայությունների ձեռքբերման հետ կապված գնման գործընթացների շրջանակներում, որի արդյունքում բացահայտվել են խնդիրներ կապված տեխնիկական բնութագրում գնման պահանջի ընդհանրական, ոչ հստակ ձևակերպման և պահանջվող ծառայության անորոշ սահմանման, պետական մարմինների կողմից տեխնիկական բնութագրի կազմման ընդհանուր մոտեցման բացակայության, ծառայությունների մատուցման սուղ ժամկետների, պահանջվող ծառայությանը ոչ համարժեք ներկայացված գնային առաջարկների, աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջների հիմնավորվածության բացակայության, լայն գործառույթների սահմանման և համակարգերի անվտանգության մասով ներկայացվող պահանջների միասնական մոտեցման բացակայության հետ: Ուսումնասիրության արդյունքում պետական մարմինների գնման ընթացակարգերին ոչ կոմպետենտ մասնակիցների մասնակցությունը բացառելու նպատակով առաջարկություն է ներկայացվել Կառավարություն, Ֆինանսների նախարարություն և Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն: Ընդ որում, Հանձնաժողովը նմանատիպ ծառայությունների շրջանակներում հարուցել է վարույթ, որի արդյունքում պետական մարմնին տրվել է նախազգուշացում:

Ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման գործընթացների վերաբերյալ ուսումնասիրություն

Հանձնաժողովը 2024 թվականին իրականացրել է ուսումնասիրություն ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման գործընթացների վերաբերյալ, որի արդյունքում բացահայտվել են խնդիրներ կապված պատվիրատուների կողմից ներկայացվող նախահաշվային գների անհամապատասխանության, նախահաշվային գների հաշվարկման ոչ արդիական մեթոդաբանության կիրառման, ներքին աուդիտի ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ոչ արդյունավետ և որակյալ ծառայությունների մատուցման, պատվիրատուների կողմից ներկայացվող թերի լրացված և ընդհանրական տեխնիկական բնութագրերի առկայության, ինչպես նաև գնման ընթացակարգերի հրավերները կազմելու գործընթացում առանց ամբողջական և նպատակային դիտարկելու որոշակի առկա իրավական ակտերից և հրամաններից մեջբերումներ կատարելու հետ, ինչը էականորեն ազդում է գնման գործընթացներին մասնակցության և

մրցակցային միջավայրի վրա: Հանձնաժողովը նկարագրված խնդրի լուծման մասով առաջարկների փաթեթ է մշակել և ներկայացրել է Ֆինանսների նախարարություն:

Փաթեթով առաջարկվել է.

1. Պատվիրատուների կողմից նախահաշվային գների հաշվարկման առկա մեթոդաբանության վերանայում կամ նոր մեթոդաբանության կիրառում,
2. Ֆինանսների նախարարի համապատասխան հրամանի առավել մանրամասն ու հստակ վերախմբագրում՝ վերջինիս մեջ ներառելով ծառայությունների մատուցման մասով գնահատման հստակ մեխանիզմներ,
3. Պատվիրատուների կողմից իրականացվող գնման գործընթացների շրջանակներում անհրաժեշտ և բավարար վերահսկողության մեխնաիզմների կիրառում՝ քննարկման առարկա դարձնելով վերահսկողական նոր մոտեցումների ներդրումը և կիրառումը, կամ արդեն իսկ կիրառվող մոտեցումների վերանայման անհրաժեշտությունը:

Հանրային կազմակերպությունների գնումների կարգավորումների վերաբերյալ ուսումնասիրություն

Հանձնաժողովը 2024 թվականին իրականացրել է նաև ուսումնասիրություն հանրային կազմակերպությունների կողմից իրականացվող գնումների վերաբերյալ: Հանձնաժողովը պարզել էր, որ հանրային կազմակերպությունների կողմից գնումների ընթացակարգերը իրականացվում են թղթային տարբերակով, և որ այս գնումների շրջանակներում տարածված պրակտիկաներ են մեկ անձից գնումների իրականացումը և փակ շրջանակային համաձայնագրերի կնքումը: Այս համատեքստում Հանձնաժողովը մշակել էր առաջարկությունների փաթեթ, որով քննարկման առարկա էր դարձվում հանրային կազմակերպությունների համար էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման հարցը՝ միաժամանակ դիտարկելով հասարակական կազմակերպությունների համար փոխկապակցվածության, մեկ անձից գնումների և շրջանակային համաձայնագրերի կնքման ավելի հստակ պայմանների մշակումը:

5.3. ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Համակենտրոնացումների ծավալն ու բովանդակությունը սերտորեն կապված է երկրի տնտեսական ակտիվության և տնտեսության զարգացման հետ:

Դրա վառ ապացույցն է այն փաստը, որ 2024 թ.-ին Հանձնաժողովի կողմից գնահատված համակենտրոնացումների մեջ առանձնանում են ֆինանսական ոլորտին և թվային հարթակներին վերաբերող գործարքները»:

Վարույթի տեսակ	Քանակ
Համակենտրոնացման թույլատրում	57
Համակենտրոնացման արգելում	1
Համակենտրոնացման գնահատման վարույթների կարճում	5
Չհայտարարգրված համակենտրոնացումների վերաբերյալ վարույթներով պատասխանատվության միջոցի կիրառում	22
Անձանց խմբի ցուցակի հրապարակում	15
Անձանց խմբի ցուցակի հրապարակման մերժում	3

Ի գիտություն

Համակենտրոնացումների նկատմամբ Հանձնաժողովի վերահսկողությունն անհրաժեշտ է համակենտրոնացման հետևանքով **մրցակցային իրավիճակը գնահատելու և սպառողների շահերի վնասման** ռիսկը պարզելու համար:

Համակենտրոնացումների գնահատումը թույլ է տալիս պատկերացում կազմել շուկայի դինամիկայի, մրցակցության համար հնարավոր ռիսկերի մասին, ինչի արդյունքում Հանձնաժողովը կարողանում է **կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել՝ այդ ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:**

Համակենտրոնացման տեսակ	Թույատրված համակենտրոնացումների քանակ
Հորիզոնական	12
Ուղղահայաց	11
Խառը	28
Անձանց խմբի ներսում	7

«Արդշինբանկ» և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» համակենտրոնացում

Հանձնաժողովի կողմից 2024 թվականին գնահատված գործարքների մեջ կարևորներից մեկը «Արդյունաբերաշինարարական բանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **«Արդշինբանկ» ընկերություն**) կողմից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ընկերություն**) 100 տոկոս փայաբաժնի ձեռքբերման գործարքը: Հաշվի առնելով, որ թե՛ «Արդշինբանկ» ընկերությունը, թե՛ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ընկերությունը հանդիսանում են Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկեր և համապատասխանաբար մատուցում են ֆինանսական ծառայությունների նույնաբովանդակ շրջանակ՝ այս գործարքը Հանձնաժողովի կողմից դիտարկվել է որպես հորիզոնական համակենտրոնացում:

Կարևոր է ընդգծել, որ 2023-2024 թվականների առաջին 9 ամիսների հաշվառմամբ «Արդշինբանկ» ընկերությունը մաքուր շահույթի ցուցանիշով հանդիսացել է առաջատարը՝ 2023 թվականին գրանցելով 56,95 միլիարդ դրամի արդյունք, որը 2024 թվականի առաջին 9 ամսում աճել է մինչև 82,63 միլիարդ դրամի, իսկ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ընկերությունը զիջել է իր դիրքերը: Եթե 2023 թվականի առաջին ինը ամիսների արդյունքով այն ուներ 9,39 միլիարդ դրամ մաքուր շահույթ և ՀՀ բանկերի շրջանում այս ցուցանիշով զբաղեցնում էր 8-րդ տեղը, ապա 2024 թվականին այս բանկն ունեցել է արդեն 8,42 միլիարդ դրամ շահույթ՝ իջնելով 9-րդ հորիզոնական:

Այս համակենտրոնացման համակողմանի գնահատման արդյունքում Հանձնաժողովը թույլատրել էր «Արդշինբանկ» ընկերության կողմից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ընկերության 100 տոկոս փայաբաժնի ձեռքբերման գործարքը:

«Բենք օֆ Ջորջիա Գրուփ Փիէլսի», «Ջիէսսի Բենք օֆ Ջորջիա» ընկերությունների և «Ամերիաբանկ» ընկերության համակենտրոնացումը

Հանձնաժողովի կողմից 2024 թվականին գնահատվել է նաև «Բենք օֆ Ջորջիա Գրուփ Փիէլսի» բաց սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Ջիէսսի Բենք օֆ Ջորջիա» բաժնետիրական ընկերության (այսուհետ միասին նաև՝ **Ընկերություններ**) կողմից «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոս փայաբաժնի ձեռքբերման գործարքը:

Այս դեպքում նույնաբար՝ հաշվի առնելով, որ գործարքի երկու կողմերն էլ հանդիսանում են բանկեր և մատուցում են նույնաբովանդակ ծառայություններ՝ Հանձնաժողովը գործարքը դիտարկել է որպես հորիզոնական համակենտրոնացում:

Կարևոր է ընդգծել, որ ի տարբերություն «Արդշինբանկ» և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ընկերությունների միջև տեղի ունեցած գործարքի՝ այս դեպքում գործարքի կողմերից մեկը՝ «Բենք օֆ Ջորջիա Գրուփ Փիէլսի» ընկերությունը գործունեություն չի ծավալել Հայաստանի Հանրապետությունում մինչև այս գործարքը: Միևնույն ժամանակ այս ընկերությունը հանդիսանում է միջազգային բորսայում ցուցակված ընկերություն, այսինքն՝ գործարքի իրականացման արդյունքում Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկա է մուտք գործել միջազգային ցուցակված ընկերություն:

Այս դեպքում նույնպես Հանձնաժողովը գնահատման արդյունքում թույլատրել է գործարքի իրականացումը:

«Տոմսարկղ» սահմանափակ պատասխանատվությամբ և «ԱյԴի Գրուփ» փակ բաժնետիրական ընկերությունների համակենտրոնացում

Հանձնաժողովի կողմից 2024 թվականին գնահատված կարևոր գործարքներից է նաև «ԱյԴի Գրուփ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **«ԱյԴի Գրուփ» ընկերություն**) կողմից «Տոմսարկղ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ «Տոմսարկղ» ընկերություն) ձեռքբերման գործարքը:

Համակենտրոնացման գնահատման արդյունքում Հանձնաժողովը արձանագրել է, որ **«Տոմսարկղ» ընկերությունն** իրականացնում է միջոցառումների տոմսերի վաճառքի կազմակերպում «Տոմսարկղ» ընկերության համակարգի միջոցով, ինչպես նաև տոմսերի վաճառքի կազմակերպում միջոցառումների կազմակերպիչների համակարգերին ինտեգրվելու եղանակով: «Տոմսարկղ» ընկե-

ությունը նաև մատուցում է գովազդային ծառայություններ՝ www.tomsarkgh.am կայքում գովազդային նյութեր զետեղելու եղանակով:

«ԱյԴի Գրուփ» ընկերությունը հոլդինգային ընկերություն է, իսկ վերջինիս հետ անձանց խումբ կազմող «Իդրամ» ընկերությունը, որը վճարահաշվարկային կազմակերպություն է, միջոցառումների կազմակերպիչների հետ կնքված պայմանագրերի հիման վրա հաճախորդներից հավաքագրում է գումարներ և հավաքագրված գումարները փոխանցում է Պատվիրատուին՝ այդ գումարները միջնորդավճարի չափով նվազեցնելուց հետո:

Ընկերությունների և նրանց հետ անձանց խումբ կազմող տնտեսավարող սուբյեկտների գործունեության դիտարկման արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ տվյալ համակենտրոնացումն ուղղահայաց համակենտրոնացում է:

Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ միջոցառումների տոմսերը վաճառվում են ինչպես միջոցառման իրականացման վայրի տոմսարկղերում, այնպես էլ www.haytoms.am համակարգի միջոցով, «Idram», «Telcell», «Wylling» հարթակներում և Ticketsystem.am, Ticketon.am, Toms.am, Tkt.am, Fastticket.am, Panel.haytoms.am, Willing.com կայքերում, սեփական կայքերի և սոցիալական ցանցերում ունեցած էջերի միջոցով: Այսինքն՝ ոլորտում գործում են բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ: Միևնույն ժամանակ մի շարք մշակութային միջոցառումներ իրականացնող կազմակերպություններ՝ մասնավորապես թատրոններ, ունեն տոմսերի ամրագրման սեփական համակարգերը:

Կարևոր է ընդգծել նաև, որ գործարքի շրջանակներում ձևավորվում է Հայաստանի շուկայի համար նոր ծառայության ձևաչափ՝ կապված վճարահաշվարկային համակարգի և միջոցառումների տոմսերի համակարգի համադրման հետ:

Վերոգրյալ հանգամանքների հաշվառմամբ՝ Հանձնաժողովը դիտարկել է այս գործարքը և վերլուծության արդյունքում թույլատրել այն:

5.4. ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Արեգ Հովհաննիսյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության պետ

«Անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանությունն անընդհատ զարգացող հասկացություն է, որը պետք է հարմարվի առևտրի էվոլյուցիային և շուկայի մասնակիցների համար նոր սկզբունքների և պարտավորությունների մշակմանը:

Ի սկզբանե նախատեսված լինելով «բարեխիղճ տնտեսավարող սուբյեկտին» պաշտպանելու համար՝ անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանության շրջանակն այժմ ընդլայնվել է: Ներկայումս անբարեխիղճ մրցակցության դեմ պայքարի նպատակն է ապահովել արդար մրցակցություն՝ ի շահ բոլոր շահագրգիռ անձանց՝ այդ թվում սպառողների»:

Տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ մրցակցության դեպքերը 2024 թ.

Ընդհանուր վարույթների քանակ	Ընթացիկ վարույթների քանակ	Ավարտված վարույթների քանակ	Տուգանքը որպես պատ. միջոց	Նախազգուշա-ցումը որպես պատ. միջոց	Կարճված վարույթների քանակ	Հարուցումը մերժելու մասին որոշումների քանակ
20	0	20	7	20	0	20

Ի գիտություն

Ցանկացած գործողություն, որն առաջացնում է **շփոթություն այլ տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ**, համարվում է անբարեխիղճ մրցակցություն:

Շփոթությունը կարող է դրսևորվել, օրինակ, այն դեպքերում, երբ մի տնտեսավարող սուբյեկտ օգտագործում է մյուսի **ապրանքային կամ սպասարկման նշանը կամ ֆիրմային անվանումը**, կամ ստեղծում է դրան **շփոթելու աստիճանի նման** ապրանքային նշան: Նման իրավիճակը կարող է արտահայտված լինել **արտաքին փաթեթավորման, տեսքի, գունային համադրության** կամ այլ հատկանիշների նմանակմամբ:

Շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն հյուրանոցային և ռեստորանային ծառայությունների մատուցման ոլորտում

Հանձնաժողովը բացահայտել է, որ **«Ծովածոց» ՍՊ** ընկերությունն օգտագործել է «Lavash» բառը պարունակող «Lavash Hotels LLC», «Lavash Hotels llc», «Lavash Hotels Llc» ֆիրմային անվանումներ այն դեպքում, երբ նման ֆիրմային անվանումներ օգտագործելու իրավունքի առկայության հավաստման տեսանկյունից առկա չէ այդ իրավունքը հավաստող «Ծովածոց» ՍՊ ընկերության անվամբ գրանցված համալիր թույլտվության պայմանագիր:

Փոխարենը «Հայր և Որդի Երեմյաններ» ընկերության անվամբ 2023 թվականի դեկտեմբերի 6-ին ազգային ընթացակարգով գրանցվել և ՀՀ-ում իրավական պահպանություն է ստացել «LAVASH RESTAURANT» անվանումով ապրանքային նշանը, իսկ 2024 թվականի փետրվարի 19-ին «LAVASH RESTAURANT» ապրանքային նշանը 2021 թվականի հունվարի 1-ից սկսած ճանաչվել է հանրահայտ, ուստի «Ծովածոց» ՍՊ ընկերությունը չի կարող օգտագործել «Lavash» բառը պարունակող «Lavash Hotels LLC», «Lavash Hotels llc» և «Lavash Hotels Llc» ֆիրմային անվանումները կամ արտահայտությունները:

Հանձնաժողովը հարուցված վարույթի արդյունքում արձանագրել է, որ «Ծովածոց» և «Հայր և Որդի Երեմյաններ» ընկերությունները գործունեություն են ծավալում նույն ոլորտում և երկու ընկերությունների կողմից օգտագործվող համապատասխանաբար «Lavash Hotels LLC», «Lavash Hotels llc», «Lavash Hotels Llc» արտահայտություններում և «LAVASH RESTAURANT» հանրահայտ ապրանքային նշանում տարբերակող բառը «Lavash»-ն է, իսկ «Հայր և Որդի Երեմյաններ» ընկերության անվամբ գրանցված «LAVASH RESTAURANT» անվանումով ապրանքային նշանը հանրահայտ է և «Ծովածոց» ՍՊ ընկերության կողմից «Lavash» բառը պարունակող նման արտահայտությունների օգտագործումը կարող է սպառողին շփոթության մեջ գցել, հետևաբար շփոթության վտանգն առկա է այն դեպքում, երբ շփոթությունը սպառողին մղում է այն մտքին, որ «Լավաշ Հոթելս» ֆիրմային անվանման ներքո մատուցվող ծառայությունն իրեն նախկինում հայտնի «Հայր և Որդի Երեմյաններ» ընկերության ապրանքն է կամ համապատասխան ծառայություն մատուցող ընկերությունն իրեն նախկինում հայտնի հանրահայտ ապրանքային («LAVASH RESTAURANT») նշանի ներքո գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպությունն է, ինչը սպառողին ստիպում է կամ կարող է ստիպել ընտրելու ոչ այն ապրանքը կամ ծառայությունը կամ առևտրային կազմակերպությունը, որը նա փնտրում է: Ընդ որում, Հանձնաժողովը «Lavash» բառը պարունակող «Lavash Hotels LLC», «Lavash Hotels llc», «Lavash Hotels Llc» արտահայտությունների և «LAVASH RESTAURANT» հանրահայտ ապրանքային նշանի շփոթելու աստիճանի նմանությունը հաստատել է լսողական, տեսողական և իմաստային նմանության առումներով:

Հանձնաժողովը «Ծովածոց» ՍՊ ընկերության կողմից «Հայր և Որդի Երեմյաններ»

ՍՊ ընկերության «LAVASH RESTAURANT» ապրանքային նշանին շփոթելու աստիճանի նման «Lavash Hotels LLC», «Lavash Hotels llc» և «Lavash Hotels Llc» արտահայտություն-ների օգտագործումը որակել է շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն և նշանակել տուգանք:

6 ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

6 ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արմենուհի Հարությունյան
Շուկաների վերլուծության բաժնի պետի պաշտոնակատար

«2024 թվականին Հանձնաժողովի իրականացրած ոլորտային ուսումնասիրությունների արդյունքում մշակվել են մի շարք առաջարկություններ, որոնք ուղղված են դիտարկված ոլորտներում էական բարեփոխումների իրականացմանը, որոնք կնպաստեն մրցակցային հավասար միջավայրի ապահովմանը՝ ոլորտներում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների համար»:

Հանձնաժողովի առանձին լիազորություն է ոլորտային ուսումնասիրությունը: Հանձնաժողովն ամեն տարի դիտարկում է առանձին ոլորտներ և ապրանքային շուկաներ՝ պարզելու ոլորտի իրավական կարգավորման բացերը, հնարավոր մուտքի խոչընդոտները, ոլորտում մրցակցության մակարդակը, ինչպես նաև մշակելու բարձրացված խնդիրների լուծման ուղիներ:

Ոլորտային ուսումնասիրությունների շրջանակներում Հանձնաժողովի նպատակն է.

1. Վերլուծել ոլորտում առկա իրավիճակը,
2. Բացահայտել ոլորտում առկա մրցակցային իրավախախտումները,
3. Ոլորտի քաղաքականությունը մշակող պետական մամնին ներկայացնել ոլորտի զարգացման առաջարկներ:

2019	2020	2021	2022	2023	2024
Բենզին և դիզելային վառելիք	Հանքարդյունա-բերություն	Թռչնամիս	Էլեկտրոնային առևտուր	Էլեկտրա-էներգետիկա	Բենզին, դիզելային վառելիք և ավիա-վառելիք
Շաքարա-վազ	Ձու	Ախտորոշիչ ծառայու-թյուններ	Մանկական կեր	ՓՄՁ ֆինանսավո-րում	Էլեկտրական շարժիչով տրանսպոր-տային միջոցների լիցքավորում
Կարագ	Ցորեն և ալյուր	Կաթ և կաթնա-մթերք	Բուսական յուղ	Էլեկտրո-նային հարթակնե-րով փոխադրում	Մրգային օղիներ
Սեղմված գազ	Դեղեր	Դեղեր	Բեռնա-փոխադրում	Ծխախոտ	Վերելակների շրջանառու-թյան և տեղադրման ու տեխնիկա-կան սպա-սարկման ծառայու-թյուններ
Կոնյակ	Գովազդ	Առևտրային ցանցեր	Աջակցող միջոցներ	Պահնորդա-կան ծառայու-թյուններ	Ամրաններ

6.1. Բենզին, դիզելային վառելիք և ավիավառելիք

Ոլորտի ընտրություն

Հաշվի առնելով բենզինի և դիզելային վառելիքի սոցիալական կարևոր նշանակությունը, լայն սպառումը, դրանց իրացման պայմանների նկատմամբ սպառողների զգայունությունը, ինչպես նաև բարձրաձայնված մտահոգություններն ավիավառելիքի ոլորտի մրցակցային իրավիճակի և հնարավոր խնդիրների վերաբերյալ, Հանձնաժողովը 2024 թվականի փետրվարի 13-ի թիվ 58-Ա որոշման հիման վրա ուսումնասիրություն է իրականացրել բենզինի, դիզելային վառելիքի և ավիավառելիքի շրջանառության ոլորտներում:

Ուսումնասիրության առարկան

Ուսումնասիրության արդյունքում դիտարկվել են հետևյալ ապրանքային շուկաները.

- **«Բենզին»** ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը ավտոմոբիլային բենզինի ամբողջ տեսականին է:
- **«Դիզելային վառելիք»** ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը իր մեջ ներառում է դիզելային վառելիքի ամբողջ տեսականին:
- **«Ավիավառելիք»** ապրանքային շուկայի **ապրանքատեսակային սահմանը իր մեջ ներառում է ավիավառելիքի (ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքի) ամբողջ տեսականին:**

Վառելիքի շրջանառության ոլորտում առանձնացված վերոնշյալ երեք ապրանքային շուկաների աշխարհագրական սահման է համարվում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը՝ հաշվի առնելով գնորդների համար ՀՀ ամբողջ տարածքում ուսումնասիրվող ապրանքների՝ առանց սահմանափակման և առանց ապրանքի որակի և սպառողական հատկանիշների կորուստների հասանելիությունը:

Ուսումնասիրության արդյունքները

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը մշակել է մի շարք առաջարկություններ ոլորտի բարելավման ուղղությամբ.

1. Համաձայն օրենսդրության՝ բենզինը, հանդիսանում է ակցիզային հարկով հարկման ենթակա օբյեկտ: Ակցիզային հարկը հաշվարկվում է սահմանված դրույքաչափի և ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալով: Ակցիզային հարկի դրույքաչափը և գործակիցը սահմանվում են Հարկային օրենսգրքով: Միևնույն ժամանակ մեկ տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 135 000 դրամի և յուրաքանչյուր տարվա համար սահմանված ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալից պակաս լինելու դեպքում (2022 թվականի համար՝ 143 100 դրամ, իսկ 2023 թվականի համար՝ 147 150 դրամ) ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որ բենզինի մեկ տոննայի համար ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը հավասարվի 135 000 դրամի և յուրաքանչյուր տարվա համար սահմանված ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալին: Արդյունքում՝ այն դեպքում,

երբ որևէ տնտեսավարող սուբյեկտ ավելի ցածր գնով է ձեռքբերում իրականացնում, վճարում է ավելի բարձր ակցիզային հարկ: Ինչպես ցույց է տվել ուսումնասիրությունը, ներմուծումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտները նույն ամսվա ընթացքում 1 լիտր բենզինի հաշվով վճարել են տարբեր չափով ակցիզային հարկ՝ մինչև 24 դրամ տարբերությամբ: Հաշվի առնելով բենզինի շուկայի կառուցվածքն ու առանձնահատկությունները՝ նշված հանգամանքը կարող է ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների համար ստեղծել անհավասար մրցակցային պայմաններ, և որևէ տնտեսավարող սուբյեկտ կարող է արհեստականորեն ձեռք բերել մրցակցային առավելություն մյուս տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ:

Այս հարցի առնչությամբ առաջարկվում է դիտարկել ակցիզային հարկի սահմանման հնարավորությունն այնպես, որ վերջնարդյունքում հարկման հավասար պայմաններ գործեն բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար:

2. Մի շարք տնտեսավարող սուբյեկտների կողմից ներմուծված և ՀՀ տարածքից ձեռք բերված նավթամթերքը (այդ թվում՝ վառելանյութը) չի համապատասխանում վերջիններիս կողմից իրացված ապրանքատեսակներին՝ ինչպես ըստ անվանման, այնպես էլ ըստ ծավալների: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ակցիզային հարկման համակարգում չգտնվող, հետևապես համապատասխան հարկային վարչարարությունից դուրս գտնվող նավթամթերքի ներմուծման հետևանքով շատ դեպքերում վերջիններս ավելացվում են ակցիզային հարկով հարկվող էներգակիրների տեսակներին, օրինակ՝ բենզինին, և իրացվում վերջինիս անվան տակ: Այս համատեքստում նման իրավիճակների կանխարգելման համար առաջարկվում է.

2.1 Դիտարկել ԱՏԳ ԱԱ 3811 կոդի ներքո ներմուծվող ապրանքների շրջանակում «օկտան» անվանման ներքո դասվող ապրանքատեսակների համար ակցիզային հարկի սահմանումը՝ հաշվի առնելով, որ այս կոդն ինքնին ենթադրում է ապրանքներ, որոնք ունեն նավթամթերքի հետ նույնական օգտագործում: Այս գործողությունը թույլ կտա կանխել վերոնկարագրյալ ակցիզային հարկով հարկվող և չհարկվող նավթամթերքի համատեղ իրացման պրակտիկան:

2.2 Բենզինի և դիզելային վառելիքի մեծածախ իրացումը թույլատրել միայն փաստաթղթերով և միայն վերջնական բազա կամ լցակայան տեղափոխման դեպքում: Նշվածը հնարավորության կտա իրականացնել վերահսկողություն ոլորտում ապրանքաշարժի նկատմամբ:

2.3 Բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ իրացումը թույլատրել միայն բենզալիցքավորման կայաններում: Նշվածը հնարավորություն կտա իրականացնել ապրանքատեսակների որակի և քանակի ստուգումներ և վերահսկողություն:

3. Բենզինի և դիզելային վառելիքի ներմուծումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտները գործունեություն են ծավալում ՀՀ-ում բենզինի ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ իրացման մակարդակներում: Հաշվի առնելով շուկայում կենտրոնացվածության բարձր մակարդակը՝ կարևորվում է այն հանգամանքը, որ բենզինի իրացման մանրածախ մակարդակում անհավասար մրցակցային պայմաններ

չստեղծվեն ներմուծումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների և մանրածախ վաճառք իրականացնող այլ տնտեսաարող սուբյեկտների միջև՝ հաշվի առնելով ներմուծողների ունեցած շուկայական իշխանությունը ոլորտում:

Այս առումով Հանձնաժողովն առաջարկում է դիտարկել ոլորտում մեծածախ և մանրածախ վաճառք իրականացնողների տարանջատումը, մասնավորապես որպեսզի բենզինի մեծածախ և մանրածախ իրացումներն իրականացվեն առանձնացված տնտեսական միավորումների կողմից (չբացառելով մեծածախ և մանրածախ մակարդակներում տնտեսավարող սուբյեկտների փոխկապակցվածության հնարավորությունը):

6.2. Էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների լիցքավորում

Ոլորտի ընտրություն

Հայաստանի Հանրապետությունում էլեկտրական մեքենաների թվաքանակի աճին զուգահեռ սկսեց զարգանալ մի նոր բիզնես ուղղություն, որի զարգացումը և ընդլայնումը լինելով առանձին գործունեություն տեսակ, իր հերթին կարևոր խթան է հանդիսանում էլեկտրական մեքենաների շուկայի զարգացման համար:

Էլեկտրական մեքենաների և դրանց լիցքավորման ենթակառուցվածքների ներդրման ուղղությամբ կատարվող համաշխարհային ծախսերը տարեց տարի արագ տեմպերով աճում են: Հայաստանի Հանրապետությունում ևս աճում է ինչպես էլեկտրական մեքենաների թվաքանակը, այնպես էլ լիցքավորման կայանների տարածումը:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություն էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների գործունեության ոլորտում:

Ուսումնասիրության առարկան

Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության շրջանակում **հատկորոշվել է «Էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայություն» ապրանքային շուկան, որի ապրանքատեսակային սահման է ճանաչվել էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայությունների մատուցումը, իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը**:

Ուսումնասիրության արդյունքները

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մատուցված ծառայությունների ծավալը և դրանց աճի տեմպը հաշվի առնելով՝ կարելի է արձանագրել, որ 2024 թվականի ընթացքում մատուցված լիցքավորման ծառայությունների ծավալը նախորդ տարվա ցուցանիշը կգերազանցի ավելի քան 4 անգամ:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը մի քանի կարևոր արձանագումներ է արել.

> Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայությունների մատուցումը դեռևս գտնվում է ձևավորման և ընդլայնման փուլում և չի հագեցնում պահանջարկի ամբողջ ծածկույթը:
> Ծածկույթի բավարարման հատկապես զգալի պահանջարկ կա մարզերում, մայրուղիների երկայնքով, ինչպես նաև Երևան քաղաքի համայնքային հասարակական նշանակության տարածքներում: Խնդիրը հատկապես զգալի է այն վարորդ-սպառողների համար, որոնք չունեն ավտոկայանատեղի կամ ավտոտնակ:
> Առկա չէ ոլորտի ընդլայնման և զարգացման որևէ ռազմավարություն, զարգացման ծրագիր, այն պարագայում երբ առկա են էլեկտրական շարժիչով մեքենաների տարածման և դրանց մուտքը ՀՀ խրախուսման պետական քաղաքականություն և արտոնություններ:
> Բաշխողի մենաշնորհ դիրք ունենալու փաստը կարող է առաջացնել որոշակի բարենպաստ պայմաններ՝ վերջինիս հետ փոխկապակցված տնտեսավարողների համար մրցակցային առավելություն ապահովելու հնարավորության տեսանկյունից (օրինակ՝ սպառման համակարգը բաշխման ցանցին միացման ավելի արագ և հեշտացված հնարավորությամբ, կամ համապատասխան տարածքների, ազատ հզորությունների կամ այլ ինֆորմացիայի վերաբերյալ, ավելի արագ հասանելիությամբ և այլն):
> էլեկտրական շարժիչով ավտոմեքենաների լիցքավորման ծառայությունների մատուցումը՝ որպես տնտեսական գործունեության տեսակ, համապատասխան դասակարգման անհրաժեշտություն ունի:
> Ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների համար նշանակալի կարևորություն ունի նաև կայանների տեղադրման նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների վարձակալության ընթացակարգերի և կարգավորումների սահմանումը:

Վերոնշյալ խնդիրների լուծման իմաստով Հանձնաժողովը մշակել է նաև մի շարք առաջարկներ.

► Տարբեր տարածքներում ազատ հզորությունների և հանրային նշանակության տարածքներում ցանցի ծանրաբեռնվածության վերաբերյալ տեղեկատվությունը թափանցիկ և հասանելի դարձնել շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ նաև տնտեսավարող սուբյեկտների համար, ինչը կբացառի ոչ հիմնավոր և միակողմանի պատճառաբանմամբ միացման հայտերի մերժման հնարավորությունը, ինչպես նաև թույլ կտա լիազոր մարմիններին ավելի հասանելի վերահսկողություն իրականացնել տարբեր ընթացակարգերի նկատմամբ:
► Բաշխողի հետ փոխկապակցված, Ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտի(ների) հետ կապված՝ անհրաժեշտ է որոշակի մեխանիզմների կամ չափորոշիչների, ինչպես նաև պարտավորությունների սահմանում, որոնց համապատասխանելու և պահպանման պարագայում կթույլատրվի փոխկապակցվածություն ունեցող տնտեսավարողին գործունեություն ծավալել Ոլորտում:
► Լիազոր մարմինների կողմից մշակել ուղեցույցներ թե՛ բաշխման ցանցին միացման ընթացակարգերի, և թե՛ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների վարձակալության և նշված վայրերում էլեկտրական լիցքավորման ծառայությունների մատուցման թույլտ-

վությունների ստացման վերաբերյալ, ինչը կհեշտացնի և որոշակի պարզաբանումներ կմտցնի Ոլորտում գործունեություն ծավալող և Ոլորտ նոր մուտք գործող տնտեսավարող սուբյեկտների համար:

▸ Հանձնաժողովն առաջարկում է լիազոր մարմիններին էլեկտրական լիցքավորման ծառայությունների մատուցման ոլորտը որպես առանձին տնտեսական գործունեության տեսակ սահմանել:

▸ Հանձնաժողովն առաջարկում է մշակել Ոլորտի վերաբերյալ ռազմավարություն, որը համապարփակ կներառի Ոլորտին առնչվող բոլոր ուղղությունները, զարգացման հեռանկարները, ռիսկերը և այլ առանձնահատկությունները՝ ուսումնասիրելով ամբողջ Հանրապետության տարածքով լիցքավորման կայանների հագեցվածության մակարդակը, գնահատելով պահանջարկ-առաջարկ հարաբերակցությունը, և ըստ այդմ քարտեզագրել ու քայլեր ձեռնարկել Հանրապետության ողջ տարածքում հագեցվածությունն ապահովելու ուղղությամբ:

6.3. Մրգային օղիներ

Ոլորտի ընտրություն

Ուսումնասիրության իրականացման համար հիմք են հանդիսացել Պետական եկամուտների կոմիտեի, Էկոնոմիկայի նախարարության և տնտեսավարող սուբյեկտների կողմից Հանձնաժողով ներկայացված Ոլորտի ուսումնասիրություն իրականացնելու վերաբերյալ առաջարկները:

Ուսումնասիրության առարկան

«Մրգային օղիներ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է հանդիսանում մրգային օղիների (ներառյալ խաղողի օղի) ողջ տեսականին, իսկ աշխարհագրական սահմանը ներառում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը:

Ուսումնասիրության արդյունքները

Հանձնաժողովը հետազոտության արդյունքում առանձնացրել է մի շարք խնդիրներ մրգային օղների ոլորտում, մասնավորապես՝

> Ներպետական օրենսդրությամբ առկա է ոլորտում կիրառելի «մրգային օղի», «մրգ-օղի», «խաղողի օղի» հասկացությունների և տերմինների սահմանման, հասկացությունների միասնականացման անհրաժեշտություն:

> «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով միայն մեղրից, պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրությունը, ինչպես նաև խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրությունը դասվում է ծանուցման ենթակա գործունեությունների

ցանկում:

> Ընդ որում, «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքի տրամաբանությամբ տվյալ գործունեության տեսակների իրականացման համար ծանուցման պահանջն առկա է նաև, եթե դա իրականացվում է ոչ ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության նպատակով:

> ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում՝ պտուղներից և (կամ) հատապտուղներից պատրաստված օղու համար ակցիզային հարկի դրույքաչափերը հավասարեցվել են սպիրտային խմիչքների համար նախատեսված ակցիզային հարկի դրույքաչափերին, ինչի կապակցությամբ մրգային օղիներ արտադրող և իրացնող տնտեսավարող սուբյեկտների համար ի հայտ են եկել Ոլորտում գործունեության ծավալման որոշակի խնդիրներ:

Վերոնշյալ խնդիրների լուծման իմաստով Հանձնաժողովը դիտարկում է հետևյալ մոտեցումները.

► Անհրաժեշտ է դիտարկել «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով քննարկվող գործունեության տեսակների համար ծանուցման պահանջ սահմանված լինելու նպատակահարմարությունը կամ նման պահանջ սահմանելու մոտեցման պարագայում դիտարկել նշված գործունեության նկատմամբ անվտանգության կանոնների կիրառելիության հարցը:

► Հաշվի առնելով մրգային օղիների՝ որպես պետության կողմից պահպանվող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեք գրանցված լինելը՝ առաջարկում ենք լիազոր մարմիններին քննարկման առարկա դարձնել «Մրգային օղիներ» ապրանքային շուկայում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների սուբսիդավորման կիրառման հնարավորությունը, որն ուղղված կլինի համապատասխան ապրանքի արտադրության խթանմանը և պահպանմանը:

► Այդ կապակցությամբ առաջարկում ենք դիտարկվող օղիների արտադրության համար սահմանել հստակ չափորոշիչներ, որոնց համապատասխանության պարագայում պետության կողմից կտրամադրվի համապատասխան սուբսիդիա:

► Միաժամանակ առաջարկում ենք Ոլորտի նկատմամբ սահմանել խստացված վերահսկողություն, որի արդյունքում բացահայտված խախտումների, սահմանված չափանիշների և պահանջների չպահպանման կամ խախտման դեպքում նախատեսել խիստ պատժամիջոցներ, ընդհուպ մինչև գործունեության դադարեցում:

► Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս առկա է մանրածախ առևտրի օբյեկտներից ՀԴՄ կտրոններով մեծ քանակությամբ օղիների ձեռքբերման և դրանք վերավաճառելու հնարավորություն, ինչի արդյունքում մեծանում է շուկայում կեղծ օղիների վաճառքի հավանականությունը, Հանձնաժողովը գտնում է, որ Ոլորտում հնարավոր կեղծարություններից խուսափելու և վերավաճառքի համար գնված օղիների շրջանառության հետագիծը ստուգելու և վերահսկողական գործիքակազմի առավել արդյունավետ կիրառման նպատակով կարելի է իրականացնել օրենսդրական փոփոխություն, որի արդյունքում կարգելվի ՀԴՄ կտրոններով օղիների գնումը և վերավաճառքը:

6.4. Վերելակների շրջանառության և տեղադրման ու տեխնիկական սպասարկման ծառայություններ

Ոլորտի ընտրություն

ՀՀ տարածքում գործող վերելակների շուրջ 80%-ը գտնվում է Երևան քաղաքում: Այսպես, Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրով նախատեսված միջոցառումներում առանցքային տեղ է զբաղեցրել «Երևան քաղաքի վերելակների փոխարինում» ծրագիրը, որի նպատակն է արդիականացնել վերելակային տնտեսությունը, օպտիմալացնել կառավարումը և ապահովել միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգ սպասարկում:

Այսպիսով՝ Հանձնաժողովի կողմից վերելակների շրջանառության և տեղադրման ու տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման ոլորտում ուսումնասիրություն իրականացնելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ տվյալ ոլորտը հանրային մեծ հետաքրքրություն է ներկայացնում, միևնույն ժամանակ, գտնվում է պետական, տեղական ինքնակառավարման մարմինների ուշադրության կենտրոնում:

Ուսումնասիրության առարկան

Ուսումնասիրության արդյունքում դիտարկվել են հետևյալ ապրանքային շուկաները.

1. «Վերելակների փորձաքննությունների իրականացման ծառայություն» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը ներառում է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքին համապատասխան բոլոր վերելակների, մասնավորապես՝ հանրային նշանակության կառույցներում, այդ թվում՝ արտադրական շինություններում, բազմաբնակարանային շենքերում, ընդհանուր օգտագործման համար նախատեսված այլ վայրերում տեղադրված, բացառությամբ 250 կգ ու փոքր բեռնատարողությամբ վերելակների տեխնիկական անվտանգության բոլոր տեսակների (այդ թվում՝ նախագծային, վկայագրի, գործարկման, կոնսերվացման, ապամոնտաժման, վերազինման և շահագործման) փորձաքննության իրականացումը:

2. «Վերելակների իրացում և տեղադրման ծառայությունների մատուցում» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման դիտարկել է վերելակների ողջ տեսականին և վերջիններիս տեղադրման ծառայությունները:

3. «Վերելակների սպասարկման ծառայությունների մատուցում» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը դիտարկել է ՀՀ-ում առկա վերելակների ողջ տեսականուն առնչվող սպասարկման ծառայությունները:

4. Վերոնշյալ երեք ապրանքային շուկաների աշխարհագրական սահմանը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքն է:

Ուսումնասիրության արդյունքները

Հանձնաժողովը ուսումնասիրության արդյունքում արձանագրել է մի շարք խնդիրներ.

► Ներպետական իրավական ակտերով կարգավորված չեն վերելակների ծառայության ժամկետը լրանալու պարագայում դրա շահագործմանն ուղղված հարաբերությունները, մասնավորապես այն, թե ժամկետը լրանալուց հետո ինչ ընթացակարգեր են պահանջվում վերելակը կրկին շահագործելու համար:
► Ներպետական իրավական ակտերով հստակ կարգավորված չէ նաև այն հարցը, թե արդյոք վերելակների հետ կապված աշխատանքների, մասնավորապես տեղադրման և սպասարկման ծառայությունների իրականացման համար պարտադիր է լիցենզիայի առկայությունը:
► Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն»-ը, լինելով պետական կազմակերպություն, հանդիսանում է շուկայում առաջատար ընկերություն, կարևոր է, որպեսզի մասնավոր փորձաքննություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները չհայտնվեն անբարենպաստ մրցակցային պայմաններում:
► Հարկ է նշել նաև, որ ի տարբերություն «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի, փորձաքննություն իրականացնող այլ մարմինները պարտավոր են տարեկան անդամավճար վճարել «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ին շուրջ 900 000 դրամի չափով: Միաժամանակ, գործելով ՆԳՆ ենթակայության ներքո, «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը հնարավորություն ունի անհատույց օգտագործել պետական գույքը, տեխնիկական միջոցները և ստանալ առավելություն մասնավոր ընկերությունների նկատմամբ:

6.5. Ամրաններ

Ոլորտի ընտրություն

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման համար շինարարության ոլորտի կարևորությունը և վերջինիս ունեցած բազմարկչային (մուլտիպլիկատիվ) ազդեցությունն այլ ոլորտների վրա՝ Հանձնաժողովի կողմից առանձնացվել են շինարարության ոլորտում օգտագործվող հիմնական արտադրատեսակները: Ելնելով շինարարության մեջ օգտագործման համեմատաբար խոշոր ծավալներից և ոլորտում հնարավոր խնդիրների առկայության առնչությամբ ստացված ազդակներից՝ Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել ամրանների շրջանառության ոլորտում:

Ուսումնասիրության առարկան

Հանձնաժողովը տվյալ ուսումնասիրության շրջանակներում հատկորոշել է **«Մետաղական ամրաններ» ապրանքային շուկան,** որի ապրանքատեսակային սահմանը ներառում է մետաղական ամրանների ողջ տեսականին: Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը ներառում է ՀՀ տարածքը, քանի որ իրացվող մետաղական ամրանները ձեռքբերման համար հավասարապես հասանելի են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և գոյություն չունեն դրանց՝ Հայաստանի Հանրապետության մարզեր տեղափոխելու հետ կապված սահմանափակումներ և խոչընդոտներ:

Ուսումնասիրության արդյունքները

Հանձնաժողովը հետազոտության շրջանակներում արձանագրել է մի շարք խնդիրներ.

► Տեխնիկական կանոնակարգի գործողությունը տարածվում է, ի թիվս այլնի, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային ծածկագրերին համապատասխան հետևյալ պողպատե արտադրանքների վրա՝ ամրանային ձողեր՝ բետոնի **ամրանավորման համար օգտագործվող, ածխածնային պողպատից, շիկագլոցված՝ 7214 99-ից:** Միաժամանակ իրականացված վերլուծությունը ցույց է տվել, որ Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ ներմուծված ամրանների 98 տոկոսը դասակարգված է եղել **ԱՏԳ ԱԱ 7214 20 կոդի ներքո:** Այս առումով հատկանշական է, որ ՀՀ ներմուծված ամրանների միայն 2 տոկոսն է ներմուծվել ԱՏԳ ԱԱ 7214 99 կոդի ներքո, իսկ մնացյալ՝ 98 տոկոսը ինչպես 2022, այնպես էլ 2023 թվականներին ՀՀ է ներմուծվել ԱՏԳ ԱԱ 7214 20 կոդի ներքո: Այս պարագայում անորոշ է մնում ԱՏԳ ԱԱ 7214 կոդի վեցանիշ այլ բացվածքների ներքո ներմուծված մետաղական ամրանների՝ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հարցը:

Միաժամանակ, Հանձնաժողովը մշակել է նաև առաջարկներ՝ ուղղված վերոնշյալ խնդիրների լուծմանը.

► Հանձնաժողովն այս համատեքստում առաջարկվում է քննարկման առարկա

դարձնել Տեխնիկական կանոնակարգի պահանջները ԱՏԳ ԱԱ 7214 բոլոր կոդերի ներքո ներմուծվող ամրանների նկատմամբ տարածելու հարցը՝ տեխնիկական կանոնակարգի նպատակների իրականացման, ոլորտում համանման գործունեություն իրականացնող սուբյեկտների և համանման ապրանքների նկատմամբ հավասար պահանջներ ու մրցակցային պայմաններ ապահովելու, ինչպես նաև սահմանված պահանջների շրջանցման հնարավոր ռիսկերը բացառելու նպատակով:

► Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Իրանից ՀՀ ներմուծվող մետաղական ամրանների արժեքները Դիտարկվող ժամանակահատվածում ավելի ցածր են եղել, քան մետաղական ամրանների միջին բորսայական արժեքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սա կարող է պայմանավորված լինել Իրանում մետաղական ամրանների արտադրության և արտահանման խրախուսմանն ուղղված պետական աջակցության ծրագրերով, Հայաստանի Հանրապետությունում արտադրվող մետաղական ամրանների և իրանական արտադրության մետաղական ամրանների միջև հավասար մրցակցային պայմաններ ապահովելու նպատակով առաջարկվում է քննարկել սակագնային կարգավորման, հակադեմպինգային միջոցառման կամ ներքին շուկայի պաշտպանական այլ միջոցառումներ կիրառելու նպատակահարմարության հարցը:

7 ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐԸ

7 ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սեդա Ոսկանյան
Վարչական վարույթների և դատական ներկայացուցչության բաժնի պետ

«2024 թվականի ընթացքում Հանձնաժողովը բազմաթիվ հաղթանակներ է ունեցել դատական գործերում: Դատարանների կողմից վերահաստատվել է անբարեխիղճ մրցակցությանը, համակենտրոնացմանը, հակամրցակցային համաձայնություններին, պետական գնումներին և տուգանքների հաշվարկման մեթոդաբանությանը վերաբերող դրույթների՝ Հանձնաժողովի կողմից կիրառված մեկնաբանությունների իրավաչափությունը»:

ՀԱՐՈՒՑՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԹԻՎԸ



**Վերջին տողում առկա է միայն մեկ ցուցանիշ՝ 2020թ.-ին:*

ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԵՐԻ ԹԻՎԸ



Կարևոր է ընդծել, որ 2019 թվականից մինչև 2024 թվականն ընկած ժամանակահատվածում դատարանների կողմից Հանձնաժողովի որոշումների մասով կայացված վճիռների շուրջ 73,4 տոկոսը եղել են հօգուտ Հանձնաժողովի:

2024 թվականին, ինչպես և նախկինում, դատարանը մի շարք սկզբունքային դիրքորոշումներ է ներկայացրել, որոնք ապագայում զգալի ազդեցություն կունենան մրցակցության պաշտպանության իրավակիրարկման վրա:

ՀՀ վարչական դատարանն ակցիաների առնչությամբ ձևավորել է հետևյալ կարևոր մոտեցումները.

► Հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցությունն իր բնույթով ունի ձևական կազմ, այսինքն՝ հետևանքի վրա հասնելը՝ սպառողի մոլորվելու փաստը, վարքագիծը Օրենքի 21-րդ հոդվածով որակելու պարտադիր և անհրաժեշտ պայման չէ: Վարքագիծը հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտում որակելու համար բավարար է միայն մոլորվելու հնարավորությունն ու հավանականությունը, այլ ոչ թե ինքնին մոլորվելու փաստը: Հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտման ձևական բնույթը դրսևորվում է նրանում, որ արարքը կատարման փաստով համարվում է ավարտված:

► Ապրանքի միջին գինն ակցիայի մեկնարկի պահին նախորդող մեկ ամսվա ընթացքում ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման գների միջին թվաբանականն է:

► Անհատական գնիջեցման արդյունքում ապրանքի վաճառքի գինը ներառվում է ապրանքի վաճառքի գների միջին թվաբանական հաշվարկի մեջ, եթե նման հաշվարկի կատարումը բացառող հանգամանքներ չեն ներկայացվում տնտեսավարողի կողմից:

► Մանրածախ առևտրի պայմանագիրը հրապարակային պայմանագիր է, հետևաբար տնտեսավարող սուբյեկտի կողմից անհատական զեղչեր կիրառելիս պետք է սահմանվեն ոչ խտրական պայմաններ:

► Տնտեսավարող սուբյեկտները պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի արտահայտություններ կիրառելուց, որոնք կարող են մոլորեցնել սպառողին: Օրինակ՝ «Ամանորյա զեղչեր սկսած 10 %-ից մինչև 35%: Շտապեք ձեռք բերել ձեր «նվեր»-ը» հայտարարության մեջ նվերի մասին նշու-մից հնարավոր չէ հանգել հետևության առ այն, որ առաջարկը վերաբերում է նվեր գնելուն և ոչ թե գնում կատարելու դեպքում նվեր ստանալու հնարավորությանը: Այսինքն՝ նվերի մասին նշումը չի կարող մեկնաբանվել որպես հաճախորդի կողմից ընկերությունից համապատասխան ապրանքը ձեռք բերելու նպատակ՝ որպես նվեր:

8 ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

8.1 ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մերուժան Խաչատրյան
Սպառողների շահերի պաշտպանության բաժնի պետ

«Հանձնաժողովը 2024 թվականին շարունակեց սպառողների շահերի պաշտպանության ինստիտուտի վերափոխմանն ուղղված ակտիվ աշխատանքները և այդ նպատակով իրականացվող օրենսդրական բարեփոխումների գործընթացը:

Հայաստանում սպառողների շահերի պաշտպանությունը թևակոխում է զարգացման նոր շրջան»:

Սպառողների շահերի պաշտպանության վերաբերյալ դեպքերը 2024 թ.

Ընդհանուր վարույթների քանակ	Ընթացիկ վարույթների քանակ	Ավարտված վարույթների քանակ	Տուգանքը որպես պատ. միջոց	Նախազգուշացումը որպես պատ. միջոց	Կարճված վարույթների քանակ	Հարուցումը մերժելու մասին որոշումների քանակ
182	33	149	52 (1 174 079 000 ՀՀ դրամ)	78	3	18

Ի գիտություն

Հասարակության մոլորեցում է համարվում՝ **ապրանքների որակն անհիմն չափազանցնելը**, որակի, քանակի կամ այլ բնութագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը և այլն:

Հասարակության մոլորեցումը կարող է **վնասել սպառողներին**՝ ստիպելով նրանց ապրանքների ընտրության գործընթացում որոշումներ կայացնել՝ հիմնվելով կեղծ կամ թերի տեղեկատվության վրա:

Մասնավոր նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերաբերյալ հարուցված վարույթներ

Մասնավոր նախադպրոցական ուսումնական հաստատությունների ուսումնասիրության շրջանակում մշտադիտարկումների, արտաքին դիտումների և դիտանցումների միջոցով արձանագրվել են թվով 161 նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերաբերյալ գովազդներ (հայտարարություններ):

Կարևոր է արձանագրել, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորվող գործունեություն է: Այն պահանջում է ունենալ համապատասխան կրթական, ենթակառուցվածքային և այլ միջոցներ՝ ուղղված երեխաների ուսման կազմակերպումն անհրաժեշտ մակարդակի վրա կազմակերպելուն: Այս իմաստով «մանկապարտեզ», «զարգացման կենտրոն», «նախակրթարան» կամ համանման անվանման կիրառումը հասարակության շրջանում ձևավորում է տպավորություն, որ կազմակերպությունն ունի համապատասխան ենթակառուցվածքներ ու հնարավորություններ՝ պատշաճ ծառայություններ մատուցելու համար:

- թվով 45 իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններին հանձնարարվել է երկամսյա ժամկետում դադարեցնել առանց նախադպրոցական կրթական ծրագրի և (կամ) նախադպրոցական ծառայության իրականացման լիցենզիայի նախադպրոցական ուսումնական հաստատությանը բնորոշ գործունեությունը, ինչպես նաև երկամսյա ժամկետում դադարեցնել նախադպրոցական ուսումնական հաստատությանը բնորոշ բառերի օգտագործումը,
- թվով 14 անհատ ձեռնարկատերերին հանձնարարվել է մեկամսյա ժամկետում դադարեցնել նախադպրոցական ուսումնական հաստատությանը բնորոշ գործունեությունը, ինչպես նաև մեկամսյա ժամկետում դադարեցնել նախադպրոցական ուսումնական հաստատությանը բնորոշ բառերի օգտագործումը:





Տոմատի մածուկի շրջանառության ոլորտում վերահսկողական միջոցառումներ

Հանձնաժողովի կողմից տոմատի մածուկի շրջանառության ոլորտում իրականացվող վերահսկողական միջոցառումների ընթացքում հսկիչ գնումների արդյունքում ձեռք է բերվել թվով 25 տեսակի «Տոմատի մածուկ» անվանումով ապրանք և ուղարկվել լաբորատոր փորձաքննության՝ դրանցում չոր նյութերի, քլորիդների (աղերի) զանգվածային մասը և շաքարի առկայությունը պարզելու նպատակով:

Լաբորատոր փորձաքննությունների արդյունքում պարզ է դարձել, որ թվով 13 տեսակի «Տոմատի մածուկ» անվանումով ապրանքները չեն համապատասխանել Տոմատային խտացրած մթերքների ընդհանուր տեխնիկական պայմանների միջպետական ստանդարտին (ԳՕՍՏ 3343-2017) և Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության

մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգին: Մասնավորապես, որոշ ապրանքներում լուծված չոր նյութերի զանգվածային մասը պակաս է եղել 25%-ից և քլորիդների զանգվածային մասն ավել է եղել 1%-ից, իսկ որոշներում միայն քլորիդների զանգվածային մասն ավել է եղել 1%-ից:

Հանձնաժողովը թվով 12 տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց՝ անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության համար՝ նշանակելով ընդհանուր շուրջ 9 443 000 ՀՀ դրամի չափով տուգանք:

Հատկանշական է, որ թվով 12 վարույթով պատասխանող տնտեսավարող սուբյեկտներից 7-ն ընդունել են վարույթով իրենց վերագրվող իրավախախտման փաստը:

Բացի այդ, Հանձնաժողովի կողմից Էկոնոմիկայի նախարարությանն առաջարկվել է քննարկման առարկա դարձնել «Տոմատի մածուկ» հասկացության և դրան ներկայացվող պահանջներն օրենսդրորեն ամրագրելու, ինչպես նաև տեխնիկական պայմաններով ապրանքին օրենսդրորեն ներկայացվող պահանջներից շեղվելու արգելք սահմանելու հարցերը:

Ուսումնասիրվել է՝

13 տեսակի «Տոմատի մածուկ» անվամբ ապրանք

12 տնտեսվարողի նկատմամբ պատասխանատվության միջոց է կիրառվել

Տուգանքը կազմել է՝ **9 443 000 ՀՀ դրամ**

Բենզինի շրջանառության ոլորտում վերահսկողական միջոցառումներ

Հանձնաժողովի կողմից բենզինի շրջանառության ոլորտում իրականացվող վերահսկողական միջոցառումների ընթացքում թվով 26 բենզալցակայաններից հսկիչ գնումներով ձեռք են բերվել պրեմիում և/կամ ռեգուլյար տեսակի բենզիններ և ուղարկվել լաբորատոր փորձաքննության՝ դրանցում օկտանային թիվը, ծծումբի զանգվածային մասը, բենզոլի ծավալային մասը և արոմատիկ ածխաջրածինների զանգվածային մասը պարզելու նպատակով:

Լաբորատոր փորձաքննությունների արդյունքում պարզ է դարձել, որ թվով 10 բենզալցակայաններից իրացվող բենզինը «Ավտոմոբիլային և ավիացիոն բենզինին,

դիզելային և նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին և մազութին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 013/2011 տեխնիկական կանոնակարգով պրեմիում և ռեգուլյար մակնիշի ավտոմոբիլային բենզինի համար սահմանված պահանջներին: Մասնավորապես, որոշ բենզինների հետազոտական մեթոդով որոշված օկտանային թիվը սահմանվածից ցածր է եղել, որոշներում՝ արոմատիկ ածխաջրածինների ծավալային մասը բարձր է եղել 35%-ից, իսկ մեկ դեպքում էլ բենզոլի ծավալային մասը բարձր է եղել 1%-ից:

Հանձնաժողովը վերը նշված բենզինները ներկրող և/կամ իրացնող թվով 6 տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության համար՝ նշանակելով ընդհանուր 147 521 000 ՀՀ դրամի չափով տուգանք:

Ուսումնասիրվել է՝

10 բենզալցակայաններից իրացվող բենզինը

6 բենզին ներկրող և/կամ իրացնող տնտեսվարողի նկատմամբ պատասխանատվության միջոց է կիրառվել

Տուգանքը կազմել է՝ **147 521 000 ՀՀ դրամ**

8.2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Սոնա Խաչատրյան
Իրավական ապահովման բաժնի պետ

«2024 թվականը նշանավորվել է Հայաստանի Հանրապետությունում սպառողների պաշտպանության կայուն և զարգացած համակարգի ձևավորմանն ուղղված բարեփոխումների իրականացմամբ:

Մասնավորապես, նշված բարեփոխումների շրջանակում մշակվել և շրջանառության մեջ է դրվել օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որն ունի առանցքային նշանակություն սպառողների պաշտպանության ոլորտում արդյունավետ և գործուն կառուցակարգերի ապահովման համար, մյուս կողմից ուղղակիորեն կապված է Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձ-նած պարտավորությունների հետ»:

2024 թվականի ընթացքում Հանձնաժողովը, համագործակցելով Էկոնոմիկայի նախարարության հետ, մշակել է օրենսդրական բարեփոխումների փաթեթ՝ ուղղված սպառողների շահերի պաշտպանության արդյունավետ համակարգ ստեղծելուն: Օրենսդրական փոփոխությունները նախատեսում են հետևյալ հիմնական ուղղությունները.

1. Սահմանվում է Հանձնաժողովի լիազորությունը որպես սպառողների պաշտպանության կենտրոնական և կոնտակտային հիմնական մարմին.

2. սահմանվում է սպառողների դեմ ուղղված իրավախախտումների վերաբերյալ հստակ կարգավորումներ՝ ներառյալ սպառողների դեմ անարդար առևտրային գործելակերպի ընդհանուր բնութագիրն ու դրա առավել կանխատեսելի դրսևորումները.

3. նախատեսվել են սպառողների դեմ ուղղված իրավախախտումների առնչությամբ վարույթների հարուցման առիթների քննարկման և վարույթների քննության առանձնահատկությունները.

4. նախատեսվել են սպառողների դեմ տնտեսավարող սուբյեկտների անարդար առևտրային գործելակերպի վերաբերյալ ամբողջական կարգավորումներ, ներառյալ՝ անարդար առևտրային գործելակերպից սպառողների պաշտպանության մեխանիզմներ: Մասնավորապես՝
ա) նախատեսվել է տնտեսավարող սուբյեկտի կողմից սպառողի նկատմամբ անարդար առևտրային գործելակերպ դրսևորելու արգելքի սկզբունքը,
բ) սահմանվել են անարդար առևտրային գործելակերպ համարվող վարքագծի հատկանիշները,
գ) սահմանվել են տնտեսավարող սուբյեկտների այն վարքագիծը, գործողություններն ու անգործությունը, որոնք բոլոր դեպքերում համարվում են անարդար:

5. Տնտեսավարող սուբյեկտների համար սահմանված է վաճառվող ապրանքի համար բնորոշ մեկ միավորի գնի ցուցադրման պարտադիր պահանջ, ինչպես նաև կարգավորումներ փաթեթավորմամբ վաճառվող ապրանքների դեպքում ապրանքի գնի հետ միասին նաև փաթեթվածքի մեջ առկա ապրանքի մեկ միավորի գնի ցուցադրման վերաբերյալ:

9 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

9.1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

2024 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է 5 մեթոդական փաստաթուղթ, որից 2 կարգ՝ կապված գյուղատնտեսական արտադրանքի ձեռքբերման շրջանակում բանակցային ուժեղ դիրք ունեցող սուբյեկտների որոշման, չհիմնավորված բարձր գնի և չհիմնավորված ցածր գնի որոշման լիազորությունների հետ, 3 նոր ուղեցույց՝ կապված համակենտրոնացումների, պետական մարմինների հակամրցակցային գործողությունների գնահատման և այլ լիազորությունների հետ:

Հանձնաժողովի կողմից մեթոդական փաստաթղթերի մշակումը օգնում է նոր աշխատակիցներին ավելի արագ և արդյունավետորեն ներգրավվել Հանձնաժողովի համապատասխան լիազորությունների իրականացման գործում, մյուս կողմից այն ապահովում է հանրության լայն շրջանակի համար Հանձնաժողովի գործունեության և առանձին լիազորությունների իրականացման վերաբերյալ տեղեկացվածությունը:

2024 թվականին Հանձնաժողովի կողմից մշակված մեթոդական կարգերից առաջինը վերաբերում է չհիմնավորված բարձր գնի և չհիմնավորված ցածր գնի **որոշմանը**, որով հստակեցվել են գնի չհիմնավորված ցածր լինելու բացահայտման շրջանակում անհրաժեշտ ծախսերի և շահույթի գումարի գնահատման, ինչպես նաև համադրելի ապրանքային շուկաների որոշման մեթոդաբանությունը: Հատկանշական է, որ Հանձնաժողովը բացի տվյալ կարգի ընդունումից 2024 թվականին հրապարակել է «Չհիմնավորված բարձր և չհիմնավորված ցածր գների որոշման վերաբերյալ» ուղեցույցը:

Մյուս կարևոր նորմատիվ փաստաթուղթը Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 27-ի թիվ 71-Ն **որոշումն** է, որը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքի ձեռքբերման հարաբերություններում բանակցային ուժեղ դիրք ունեցող ձեռք բերողի և իրացնողի անհրաժեշտ հասույթի չափերը:

Հանձնաժողովի կողմից ուղեցույցի տեսքով մշակվել է նաև պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների գնահատման մեթոդաբանությունը, որով հստակեցվել է այն քայլերի հաջորդականությունը, որը Հանձնաժողովն իրականացնում է պետական մարմինների հակամրցակցային վարքագծի գնահատման շրջանակներում: Այսպիսով՝ ուղեցույցով ներկայացված է, որ գործընթացը կազմված է երեք հիմնական փուլերից՝ պետական մարմնի գործողության օրինականության գնահատում, դրա մրցակցության վրա ազդեցության գնահատում և իրականացված գործողության նպատակի և մրցակցության վրա ազդեցության համաչափության գնահատում: Ուղեցույցը նաև պարունակում է ուղղորդող հարցեր նկարագրվող բոլոր

գնահատողական փուլերի համար, ինչը կարող է օգտակար լինել աշխատակիցներին կոնկրետ իրավիճակներում պետական մարմնի գործողությունը վերլուծելու և ազդեցությունները որոշելու ու գնահատելու հարցում:

Հանձնաժողովը մշակել է նաև «Համակենտրոնացումների գնահատման վերաբերյալ» ուղեցույց, որով հստակեցվել են համակենտրոնացման արդյունքում առաջացող հնարավոր մրցակցային սահմանափակումների, հակակշռող գործոնների առկայության, համակենտրոնացման մասնակիցների նկատմամբ սահմանվող պայմանների տեսակների և դրանց մշակման սկզբունքների գնահատման առանձնահատկությունները: Ուղեցույցը նկարագրում է թե՛ գործընթացի հիմնական փուլերին բնորոշ հանգամանքներ՝ կապված ապրանքային շուկայի որոշման, հիմնական ազդեցությունների գնահատման հետ, թե՛ առանձնացնում է հատուկ իրավիճակներում ուշադրության արժանի առանձին հանգամանքներ, ինչպիսիք են՝ ձախողված տնտեսավարող սուբյեկտի ակտիվների ձեռքբերումը կամ էլեկտրոնային հարթակների հետ կապված համակենտրոնացման դեպքերը:

9.2. Կրթական ու գիտական համագործակցություն

Հանձնաժողովը վերջին տարիներին որդեգրել է կարևոր մոտեցում՝ կապված ուսանողների՝ Հանձնաժողովի աշխատանքում ներգրավվածության հետ: Ուսանողները նախ հնարավորություն են ունենում ներկա լինելու Հանձնաժողովի նիստերին՝ հասկանալու և իրականության մեջ տեսնելու Հանձնաժողովի աշխատանքը: Սա թույլ է տալիս ավելի արդյունավետորեն նրանց ծանոթացնել թե՛ Հանձնաժողովի լիազորությունների և գործունեության հետ, թե՛ Հանձնաժողովում հետագայում աշխատանքի և հնարավոր մասնագիտական փորձառության հեռանկարների հետ:

2024 թվականին Հանձնաժողովի նիստերին մասնակցել է 56 ուսանող Հայ-Ռուսական և Երևանի պետական համալսարաններից: 2024 թվականին հանձնաժողովն ունեցել է 21 պրակտիկանտ և 1 պրակտիկանտի ընդունել է աշխատանքի: Նույն թվականին Հանձնաժողովն ունեցել է 6 փորձնակ, որոնցից մեկը հետագայում ընդունվել է աշխատանքի Հանձնաժողովում:

Հանձնաժողովը թե՛ կրթության, թե՛ համալսարանների գիտական ներուժի ներգրավման հարցերով հնարավորինս սերտացրել է իր հարաբերությունները համալսարանների հետ: 2024 թվականին Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր:

Համանման հուշագրեր արդեն առկա էին Երևանի պետական համալսարանի, Արդարադատության ակադեմիայի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Հայաստանում ֆրանսիական համալսարանի հետ:

9.3. Մրցակցության շահերի պաշտպանություն և հանրային իրազեկման միջոցառումներ

2024 թվականին Հանձնաժողովը իրականացրել է լայնամասշտաբ հանրային իրազեկման աշխատանքներ՝ ուղղված մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը: Մասնավորապես՝

► «Գործարար ալիք» ռադիոկայանի հետ համատեղ իրականացվող «Խաղի կանոնները» նախագծի շրջանակում շաբաթական պարբերականությամբ պատրաստվել և եթեր են հեռարձակվել հարցազրույցի ձևաչափով շուրջ 25 րոպե տևողությամբ հաղորդումներ՝ մրցակցության և սպառողների շահերի պաշտպանությանն առնչվող հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ:

► Իրավաբան.net կայքի հետ համատեղ փոդքասթերի շարք է նախաձեռնվել, որի շրջանակում կարճ հոլովակների միջոցով ներկայացվել են տնտեսական մրցակցության հիմնական հասկացությունները: Միաժամանակ հարցազրույցներ են պատրաստվել 5 ապրանքային շուկաների ուսումնասիրությունների վերաբերյալ:

► Իրականացվել է հանրային իրազեկման արշավ ակցիաների և զեղչերի նոր կարգավորումները լայն հանրությանը ներկայացնելու նպատակով, որի շրջանակում պատրաստվել և խոշոր առևտրային կենտրոններում փակցվել են իրազեկող պաստառներ, ինչպես նաև կարճ աուդիո հայտարարությունների միջոցով սպառողներն իրազեկվել են իրենց իրավունքների մասին: Բացի այդ, տարածվել են հաղորդագրություններ, ինֆոգրաֆիկաներ, կազմակերպվել հարցազրույցներ:

► Իրականացվել է հանրային իրազեկման արշավ գյուղմթերքի ուշ վճարումների առևտրային ցանցերի և մատակարարների համար նոր օրենսդրական կարգավորումների վերաբերյալ: Կազմակերպվել են իրազեկման սեմինարներ գործարարների համար, հեռուստառեպորտաժներ, հարզացրույցներ, տարածվել մամուլի հաղորագրություններ, այլ տեղեկատվական նյութեր: Կարճ հաղորդագրություններ (SMS) են տարածվել գյուղմթերքի ուշ վճարումներին առնչվող նոր օրենսդրական կարգավորումների վերաբերյալ քաղաքացիներին իրազեկելու նպատակով:

► Համաշխարհային բանկի կողմից հոլովակներ են պատրաստվել e-compete համակարգի միջոցով հանձնաժողովին առցանց դիմումներ ուղարկելու, կայքում գների մոնիտորինգի գործիքի հնարավորությունները հանրությանը ներկայացնելու համար, որոնք տարածվել են սոցիալական ցանցերով:

9.4 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Անահիտ Միքայելյան
Միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

«2024 թվականը առանձնահատուկ էր Հանձնաժողովի միջազգային համագործակցության ընդլայնման տեսանկյունից:

Օտարերկրյա մրցակցային մարմինների հետ նոր կապերի ստեղծումը և համագործակցության ամրապնդումը մրցակցության քաղաքականության և օրենսդրության կիրարկման ոլորտում հետագա փոխգործակցության խորացման լայն հնարավորություններ են ընձեռում»:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ

Մրցակցության միջազգային ցանց (ICN)

Միջազգային Մրցակցության ցանցը բավարարել է Հանձնաժողովի՝ Մրցակցության միջազգային ցանցի մրցակցության իրազեկման (Advocacy) աշխատանքային խմբի կողմից կազմակերպվող միջազգային աշխատաժողովը հյուրընկալելու հայտը: Նախատեսվում է աշխատաժողովը կազմակերպել 2026 թվականի մարտին Երևանում:

Հանձնաժողովը նաև մասնակցություն է ունեցել մայիսի 14-ից 17-ը Բրազիլիայի Դաշնային Հանրապետության Կոստա դու Սաուիպե քաղաքում կայացած Մրցակցության միջազգային ցանցի տարեկան համաժողովին, որի ընթացքում քննարկվել են Մրցակցային միջազգային ցանցի կողմից մշակվող փաստաթղթերի արդյունավետությունն ու կիրարկելիությունը անդամ պետությունների կողմից՝ դիտարկելով հետագայում կառույցի կողմից ուսումնասիրության համար առավել կարևոր և առաջնային թեմաների առանձնացումը, որը կարող է օգտակար լինել անդամ պետությունների մրցակցային կառույցների գործունեության բարելավմանը:

ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը համագործակցում է հետևյալ միջազգային կառույցների հետ

Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհուրդ (այդ թվում՝ գովազդի կոորդինացիոն խորհուրդ)

Եվրասիական տնտեսական հանձնաժողով (ԵՏՀ) (Հակամենաշնորհային կարգավորման դեպարտամենտ, Մրցակցային քաղաքականության և պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում քաղաքականության դեպարտամենտ

Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) առևտրի և զարգացման հարցերով համաժողով (UNCTAD)

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Բուդապեշտում մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոն (OECD-RCC)

ԵՄ Էներգետիկ համայնքի անդամ պետությունների մրցակցային մարմինների միջև մրցակցության ցանց

Մրցակցության միջազգային ցանց (ICN)

Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանց (ICPEN)

«Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանց» (ICPEN)

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը 2023 թվականի նոյեմբերի սկզբին միացել է «Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանցին» (International Consumer Protection and Enforcement Network/ICPEN):

Հանձնաժողովը մասնակցել է մայիսի 6-ից 10-ը Լեհաստանի Հանրապետության Գդանսկ քաղաքում և սեպտեմբերի 24-27-ը ԱՄՆ Վաշինգտոն քաղաքում կայացած Կազմակերպության տարեկան համաժողովներին, որոնց շրջանակներում կարևոր քննարկման թեմաներն են եղել սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող մարմինների առաջնահերթությունների սահմանումը և դրանց հիման վրա վերջիններիս արդյունավետության գնահատումը, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող կազ-

մակերպությունների հետ աշխատանքի խորացումը:

«Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանցի» համատեքստում կարևոր զարգացման ուղղություն է նաև Իտալիայի մրցակցային մարմնի հետ 2024 թվականի դեկտեմբերից սկսած Սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող մարմնի արդյունավետության բարձրացման մենթորական ծրագիրը, որի շրջանակներում Իտալիայի մրցակցային մարմինը, որը ունի թե՛ մրցակցության, թե՛ սպառողների շահերի պաշտպանության լիազորություններ, ներկայացնելու է իր փորձը կապված սպառողական բողոքների ընդունման, մշակման և գնահատման, սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող մարմինների առաջնահերթությունների սահմանման, արդյունավետության գնահատման, սպառողների շահերի պաշտպանության վերաբերյալ վարույթներում հատուկ գործիքակազմերի օգտագործման հետ:

Քննարկվելու են նաև սպառողների շահերի պաշտպանության իրավական դաշտի, սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող պետական մարմնի լիազորությունների շրջանակի և սպառողական վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների վերաբերյալ հարցեր: Ծրագիրն ավելի պրակտիկ և արդյունավետ դարձնելու համար նախատեսվում է անցկացնել երկու ուսումնական այց Հռոմ և Երևան:

Միացյալ ազգերի առևտրի և զարգացման համաժողով (UNCTAD)

Հանձնաժողովը անդրսահմանային հակամրցակցային համաձայնությունների և էլեկտրոնային առևտրում սպառողների իրավունքների պաշտպանության աշխատանքային խմբերի անդամ է: Թվային շուկաներում մրցակցության զարգացման հարցերի քննարկման համատեքստում կարևոր է ընգծել, որ Հանձնաժողովը մասնակցել է հուլիսի 1-ից 2-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաքում կայանալիք սպառողների շահերի պաշտպանության օրենքի և քաղաքականության վերաբերյալ 8-րդ և մրցակցության օրենքի և քաղաքականության վերաբերյալ փորձագետների միջկառավարական խմբի 22-րդ նիստերին, որի շրջանակներում մասնակիցները կարծիքներ են փոխանակել թե՛ թվային գործիքների և արհեստական բանականության՝ մրցակցային վերահսկողության շրջանակներում օգտա-

գործման, թե՛ թվային հարթակների և էկոհամակարգերի, ինչպես նաև հենց արհեստական բանականության կողմից առաջացող նոր մրցակցային ռիսկերի վերաբերյալ:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)

2024 թվականին Հանձնաժողովը դիմել էր միանալու ՏՀԶԿ Մրցակցության օրենսդրության կիրարկման թափանցիկության և ընթացակարգային իրավաչափության ուղենիշներին, և ՏՀԶԿ գնահատումից հետո Հանձնաժողովի դիմումը հաստատվել է՝ փաստելով ՏՀԶԿ նորմերին Հանձնաժողովի կողմից կիրառվող ընթացակարգերի համապատասխանությունը: Այսպիսի գնահատականը կարևոր է հատկապես Հանձնաժողովի գործիքակազմի և ընթացակարգերի շարունակական բարելավման համատեքստում:

Հանձնաժողովը մասնակցել է նաև Փարիզում կայացած Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) մրցակցության հարցերով 23-րդ համաշխարհային համաժողովին, որի շրջանակում ելույթ է ունեցել «Մրցակցությունը սննդի մատակարարման շղթայում» թեմայով նիստին:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մրցակցության և հակամենաշնորհային կարգավորման հարցերով բլոկ

Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են սեպտեմբերի 30-ին Երևանում կայացած «ԵԱՏՄ 10 տարին. հեռանկարներ և առաջնահերթություններ» խորագրով Եվրասիական տնտեսական համաժողովի շրջանակներում տեղի ունեցած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մրցակցության և հակամենաշնորհային կարգավորման հարցերով բլոկի «Անդրսահմանային շուկաներում հակամենաշնորհային կարգավորման զարգացման ուղղությունները և իրավակիրառ պրակտիկան» և «Պետական

գնումները՝ որպես տնտեսական ինտեգրման գործոն» թեմաներով նիստերին:

Նիստին մասնակցել են ԵՏՀ մրցակցության և հակամենաշնորհային կարգավորման բլոկի, Եվրասիական տնտեսական միության դատարանի, Բելառուսի, Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Ուզբեկստանի մրցակցային մարմինների ներկայացուցիչները:

Բանախոսները ներկայացրել են նաև մրցակցության գործերի վերաբերյալ ԵԱՏՄ դատարանի իրավական դիրքորոշումներին, ԵԱՏՄ շուկաներում մրցակցության ազդեցությունների կանխարգելման «գորշ գոտիների» առկայությանը, էլեկտրոնային հարթակների գործունեության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների անհրաժեշտության և այլ հարցերի շուրջ իրենց փորձն ու տեսակետները:

Եվրասիական տնտեսական համաժողովի շրջանակներում կազմակերպվել է նաև գործարար համայնքի համար հանրային ընդունարան: Հանրային ընդունարանը ԵԱՏՄ բիզնես հանրության հետ ուղիղ երկխոսության բաց հարթակ է, որի շրջանակում ներկայացվում են ԵԱՏՄ անդրսահմանային շուկաներում մրցակցության ապահովման ուղղությամբ իրականացված աշխատանքները, քննարկվում են բիզնեսին հուզող խնդրահարույց հարցերը և դրանց լուծման ուղիները:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Բուդապեշտում Մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոն (OECD-RCC)

Բուդապեշտում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոնը (այսուհետ նաև՝ Կենտրոն) ՏՀԶԿ և Հունգարիայի մրցակցության մարմնի միջև համագործակցության նախագիծ է, որը ստեղծում է մրցակցության քաղաքականության և կիրարկման հնարավորություններ Հարավարևելյան և Արևելյան Եվրոպայում: Կենտրոնը պարբերաբար կազմակերպում է սեմինարներ և համաժողովներ, որոնց նպատակն է ակտիվորեն նպաստել հարավ-արևելյան, արևելյան և կենտրոնական Եվրոպայի տարածաշրջաններում մրցակցային քաղաքականության և մշակույթի զարգացմանը, համագործակցության խթանմանը և տեղեկատվության ու փորձի փոխանակմանը:

Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են Կենտրոնի կազմակերպած մի շարք սեմինարներին՝ հնարավորություն ունենալով զարգացնել իրենց գործնական ունակությունները մրցակցային վերահսկողության բազմաթիվ ուղղություններում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ

«Աջակցություն ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ մոնիթորինգի, իրականացման և հաղորդակցության» ծրագրի շրջանակում «Սպառողների շահերի պաշպանության համակարգը» տեխնիկական աջակցության ծրագիր

ԵՄ լավագույն փորձին սպառողների շահերի պաշտպանության օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի շարունակական մոտարկման նպատակով «Աջակցություն ՀԸԳՀ մոնիթորինգի, իրականացման և հաղորդակցության» ծրագրի շրջանակներում 2024 թվականի ընթացքում իրականացվել է «Սպառողների շահերի պաշտպանության համակարգը» տեխնիկական աջակցության ծրագիրը, որի հիմնական նպատակներն են.

► սպառողների պաշտպանության վերաբերյալ օրենսդրության ուսումնասիրությունը և առաջարկությունների ներկայացումը,

► սպառողների պաշտպանության հստակ ինստիտուցիոնալ շրջանակի ձևավորումը,

► Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին սպառողների պաշտպանության ոլորտում իրավակիրարկման իրավասության բարելավմանն ուղղված առաջարկների ներկայացումը,

► շահագրգիռ պետական կառույցների աշխատակիցների սպառողների պաշտպանության ոլորտում գիտելիքների և հմտությունների մակարդակի բարձրացումը:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են ԵՄ-ում սպառողների պաշտպանության հիմնական իրավական շրջանակը, սպառողների շահերի պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրության բացերը, ինչպես նաև առաջարկներ սպառողների պաշտպանության ոլորտում արդյունավետ համակարգի ձևավորման վերաբերյալ: Ներկայացվել են նաև Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանցի (ICPEN) շրջանակներում Հանձնաժողովի համագործակցության հեռանկարները, ինչպես նաև միազգային այլ հարթակների, ադ թվում՝ Միացյալ ազգերի առևտրի և զարգացման համաժողովի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, Համաշխարհային բանկի միջոցով սպառողների շահերի պաշտպանության ոլորտում համագործակցության ընդհանուր ուղղությունները:

Ծրագրի արդյունքում միջազգային փորձագետները ներկայացրել են «Հայաստանի Հանրապետության սպառողների իրավունքների պաշտպանության օրենսդրության՝ ԵՄ օրենսդրական բազային ներդաշնակեցման մակարդակի գնահատման վերաբերյալ» զեկույցը, որում համապարփակ ուսումնասիրություն է իրականացվել ԵՄ և ՀՀ օրենսդրական դաշտի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացվել են առաջարկներ ԵՄ ստանդարտներին Հայաստանի Հանրապետության սպառողների իրավունքների պաշտպանության օրենսդրության ներդաշնակեցման գործընթացի հիմնական ուղղությունների, սպառողների իրազեկվածության և կրթվածության մակարդակի բարձրացման վերաբերյալ:

ԱՄՆ Առևտրի դեպարտամենտի Առևտրային օրենքի զարգացման ծրագիր (CLDP)

Ծրագրի շրջանակում մրցակցության ոլորտի փորձագետների կողմից մշակվել է «Էլեկտրոնային հարթակներին առնչվող ՀՀ օրենսդրության և կիրարկման խնդիրների վերլուծության (GAP analisys) վերաբերյալ» զեկույցը:

Փաստաթղթում բարձրացված հիմնահարցերին անդրադառնալու նպատակով սեպտեմբերի 16-18-ը Երևանում անցկացվել է քննարկում՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) ծրագրի փորձագետների, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, Էկոնոմիկայի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կարևոր է նաև ընդգծել, որ 2024 թվականի ընթացքում Հանձնաժողովի նախագահը Վաշինգտոնում հանդիպում է ունեցել ԱՄՆ Առևտրի դեպարտամենտի Առևտրային իրավունքի զարգացման ծրագրի (CLDP) ղեկավարի, Եվրոպայի և Եվրասիայի տարածաշրջանների գծով պատասխանատուի և ծրագրի խորհրդատուի հետ:

Երկկողմ համագործակցություն

2024 թվականին Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի և Իտալիայի մրցակցային մարմնի միջև կնքվել է մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության օրենսդրության կիրարկման և մրցակցային քաղաքականության ոլորտում համագործակցության վերաբերյալ հուշագիր:

10 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2025 թվականի համար Հանձնաժողովը որպես առաջնահերթություն է դիտարկում **պետական գնումների համակարգում մրցակցային միջավայրի բարելավումը:**

Այս իմաստով Հանձնաժողովը մի կողմից շարունակելու է իրականացնել ուսումնասիրություններ սոցիալական կարևորություն ներկայացնող ոլորտներում պետական գնումների գործընթացների վերաբերյալ՝ վերահսկելու գործընթացներում հնարավոր հակամրցակցային վարքագծի, օրինակ՝ հակամրցակցային համաձայնությունների կամ անբարեխիղճ մրցակցության առկայության ռիսկերը և կանխարգելելու նման վարքագիծը:

Միաժամանակ կարևոր է նաև գործընթացների **թվայնացման ուղղությունը**, որը նույնպես հանդիսանալու է Հանձնաժողովի 2025 թվականի առաջնահերթությունից: Այսպես, Հանձնաժողովը մի կողմից շարունակելու է աջակցել Ֆինանսների նախարարությանը՝ ձևավորելու պետական գնումների իրականացման նոր էլեկտրոնային հարթակը՝ հագեցած հակամրցակցային վարքագծի դրսևորումները տարբերակող թվային գործիքներով, մյուս կողմից զարգացնելու է սեփական գործիքակազմը՝ հնարավորություն ունենալու առկա պայմաններում ավելի արդյունավետորեն բացահայտելու նման վարքագծի դեպքերն արդեն առկա պետական գնումների շրջանակներում:

Թվայնացման հարցը սերտորեն կապված է նաև **թվային հարթակների և էլեկտրոնային առևտրի** դեպքում Հանձնաժողովի լիազորությունների կիրարկելիության զարգացմանը՝ կապված թե՛ Հանձնաժողովի գործիքակազմի թվայնացման, թե՛ առկա գործելակերպի և մոտեցումների վերաիմաստավորման և արդիականացման հետ:

Սպառողների շահերի պաշտպանության համակարգի հետագա զարգացումը լինելու է Հանձնաժողովի երրորդ առաջնահերթությունը 2025 թվականի համար:

Այս մասով Հանձնաժողովը պլանավորում է շարունակել օրենսդրական բարեփոխումների գործընթացը՝ 2024 թվականին մշակված օրենսդրական փոփոխությունների փաթեթի ընդունմանը զուգահեռ կենտրոնանալով պայմանագրերում անարդար պայմանների, մոլորեցնող գովազդի և գնված ապրանքի համապատասխանության վերաբերյալ խնդիրները կարգավորող Եվրոպական միության ստանդարտներին համապատասխան **օրենսդրական ակտերի ձևավորման վրա:**

Զուգահեռաբար Հանձնաժողովը պլանավորում է ակտիվացնել աշխատանքը **սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ՝** նպատակ ունենալով ձևավորել սպառողական խնդիրների լուծման բազմավեկտոր և համապարփակ համակարգ, որում առկա կլինեն սպառողին անհրաժեշտ խնդրի լուծման թե՛ վարչական,

թե՛ այլընտրանքային արդյունավետ մեխանիզմներ:

Սպառողների շահերի պաշտպանության իմաստով առանձնակի կարևորություն ունի նաև սպառողների կրթվածության աստիճանի բարձրացումը, քանի որ սեփական իրավունքների մասին տեղեկացվածությունը հետագայում դրանց արդյունավետ պաշտպանության հիմնական գրավականն է:

Այս իմաստով բացի ավանդական իրազեկման միջոցառումներից, Հանձնաժողովը նախատեսում է 2025 թվականին ակտիվ ներգրավվել **սպառողական կրթության** տարրերի՝ կրթության դպրոցական և արտադպրոցական մոդելներում ներառելու գործում: Այսպես մենք կկարողանանք ապահովել, որպեսզի երեխաներն արդեն դպրոցական տարիքից տեղեկացված լինեն սեփական իրավունքների և դրանց պաշտպանության մեխանիզմների մասին:

Սպառողների և իրենց իրավունքների պաշտպանության մեջ ներառված կազմակերպությունների մշտական և արդյունավետ կապի ապահովման իմաստով Հանձնաժողովը պլանավորում է 2025 թվականին փուլային եղանակով գործարկել սպառողների համար նախատեսված էլեկտրոնային հարթակ, որի միջոցով սպառողները կկարողանան հեշտությամբ իրենց բողոքները ներկայացնել Հանձնաժողովին:

11 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

11.1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀԱԿԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՈՒԳԱՆՔ	
«ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Երևան, Ծովակալ Իսակովի պող., 11/1, www.cps.am
«ՖԼԷՇ» ՍՊԸ	Երևան, Եզնիկ Կողբացու փող., 30 շենք, բն. 30, www.flashpetrol.am
«ՄԵԳԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ	Երևան, Դրոյի փ., 10, բն. 10
««ՄԱՔՍ ՕԻԼ» ՈՒ «ԿԱՄՕՅԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՆՁԱՆՑ ԽՈՒՄԲ	Երևան, Էրեբունու փող., 12/4 շենք, www.maxoil.am
ԳԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ ՏՈՒԳԱՆՔ	
««ՅԱՆԴԵՔՍ ՍՆՈՒՆԴ ԷՅԷՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՖՈՒԴՏԵՔ ԸՆԴ ԴԵԼԻՎԵՐԻ Բ.Վ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՅԱՆԴԵՔՍ ԵԴԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՏԵԽ ՍԵՐՎԻՍԵՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՖՈՒԴ ԴԵԼԻՎԵՌԻ1» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»» անձանց խումբ	Երևան, Կենտրոն, Մոսկովյան փ., շ 35, www.eats.yandex.com/en-am/Yerevan?shippingType=delivery
ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՈՒԺԵՂ ԴԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ	
«ԱԳԱԹԱՏ-ԳՈԼԴ» ՍՊԸ	Արարատ, Նոր Կյուրին փ. 7, տ. 2, www.agatatgold.am
«ՀԱՅԱՍԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Արագածոտնի մարզ, Ոսկեվազ գյուղ, Արագածի 11-րդ նրբ., տ. 11, www.hayasy.am
«ՍԱՄ ՀԱՐ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Կոտայքի փ. 1/73, www.sipan.am/am
«ՎԻԼ ՖՈՒԴ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Հրազդան, Վանատուր 1, www.vilfood.am
«ՎԱՆ 777» ՍՊԸ	Արարատի մարզ, Տափերական գյուղ, Պարույր Սևակի փող., 1 շենք, www.van777.am
ԳԻՆՈՒ-ԿՈՆՅԱԿԻ ՏՈՒՆ «ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Եղվարդ, Երևանյան խճուղի, 7 շենք, www.shahnazaryan.com/en/home/
«ՇԱՏՈ-ԱՌՆՈ» ՍՊԸ	Երևան, Եր. Քոչարի, 21/1, 114, www.shatoarno.am/am

ՉՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ	
«ՓՐՈՋԵՔԹ ՖԱՅՆԸՆՍ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	Երևան, Գ. Ղափանցյան փ., շ. 2/12
«ԱՊԵՔՍ ԹՐԵՅԴԻՆԳ» ՓԲԸ	Երևան, Գ. Ղափանցյան փ., շ. 2/12
«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ	Երևան, Արցախի 75, www.pureironplant.am/am/
«ՔՐՈՆԻՄԵՏ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	-
«ՏԵՔՍ» ՓԲԸ	Երևան, Մ. Խորենացու 33, 6-րդ հարկ, բն. 617 սենյակ
«ՎԵԿՏՈՐ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ» ՍՊԸ	Երևան, Մ. Խորենացու փ, 9/28 շենք
«ԱՎԱՆԳԱՐԴ ՄՈԹՈՐՍ» ՓԲԸ	Երևան, Գայի պող., 14/3, www.mercedes-benz.am
«ԱՎԱՆԳԱՐԴ ՍԻԹԻ» ՓԲԸ	Երևան, Սարալանջի փ., թիվ 1
«ՄՈՒԼՏԻ-ԼԵՈՆ» ՍՊԸ	Երևան, Ծովակալ Իսակովի 9, www.multigroup.am/
«ԲԱՐՁՐՈՒՆՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Երևան, Բրյուսովի փ., շ 69, բն. 28
«ՄՈՆԱԿՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Կոտայք, Զովունի, 1-Ին փող., 142/7
«ՄԵՏԱՂ ԿԱՅՄ ՀԻԴՐՈ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ	Երևան, Աբովյան փ. 13/8, www.metaghkaym.com/
«ԵՐԵՎԱՆԻ ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ	Երևան, Թբիլիսյան խճուղի, 20 շենք, www.armchampagne.am/
«ԱԼԵՔՍ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ	Երևան, Շահումյան 5 փ., տ 37, www.alextextile.am/hy/
«ՍԵՐԵՈՆ» ՍՊԸ	Երևան, Ծիծեռնակաբերդի խճղ., 1/2, բն. 305-307 տծք
«ՄԵԾ ՏՈՆԱՎԱՃԱՌ» ՍՊԸ	Երևան, Նար-Դոսի փ., 2, www.yerevanmarket.am/
«ՓՐԱՅՄ ԳՐՈՒՊ ՕՖ ՔՈՄՓԸՆԻՍ» ՓԲԸ	Երևան, Հակոբ Հակոբյան փ., 3/2
«ՖՐԻՎԵՅ 2021» ՍՊԸ	Երևան, Լազոյի փ., շ 6, բն. 67
«ԿՈՊԱՐԿ» ՍՊԸ	Երևան, Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ փ., 45 շ., բն. 5/1
«ԴՐԱՅՎԴՈԿ» ՍՊԸ	Գյումրի, Ջիվանու փ., տ 153
«ԹՐԻՓ» ՍՊԸ	Երևան, Նորաշեն թղմ., 19 շ., բն. 77
«ՔԼԵՎԵՐ ԼԱՅՆ» ՍՊԸ	Երևան, Հ. Հակոբյան փ., շ 3/2
«ԴԱՅՐԵՔԹ ԲԻ» ՍՊԸ	Երևան, Ամիրյան 4/4, www.directb.us/
«ԷՅ ԷՄ ԷՅ ԷՅ» ՍՊԸ	Երևան, Ա. Վշտունու փ., 31
«ՓՈՒՆԹ ՎԻԺՆ» ՍՊԸ	Երևան, Հալաբյան փ., շ 39, բն. 67
«ՊՐԱՅՄՍՈԼԱՐ» ՍՊԸ	Վանաձոր, Գր. Լուսավորիչի փ., շ 22, բն. 16
«ԴԵԿՈՐՊՐՈՖ» ՍՊԸ	Երևան, Շարուրի փ., տ 36/3, www.decorprof.am/
«ՄԱԳՆԱԿ ՍՈԼԱՐ» ՍՊԸ	Երևան, Ն. Ադոնցի փ., 8 շ., բն. 170 տարածք

«ՄԻԿՇԻՆ» ՍՊԸ	Երևան, Բայրոնի փ, 4, բն. 11, www.mikshin.am
«ԱՐՄԵՆԻԱՆ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս, №6 վարչական շենք, www.armtobacco.am/hy
«Ա ՏՈԲԱԿԿՈ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս, №6 վարչական շենք, www.armtobacco.am/hy
«ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ	Երևան, Պուշկինի փող., 38/1 շենք, շինություն 55, www.iunetworks.am/
«ԱՐԿԱԹ» ՍՊԸ	Կարճևան, 3 փ., տ 13
«ԴՐԱՅՎ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ	Երևան, Թբիլիսյան խճուղի, 9/14 շենք, https://drivemotors.am/
«ԹԲ35/10» ՍՊԸ	Երևան, Թբիլիսյան խճուղի, 35/10
«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ	Երևան, Սմբատ Զորավար փ, 11/3
«ՄԻՐԵԼԻՍ ԼԻՄԻԹԻԴ» ՍՊԸ	
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱԿԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՆԱԽԱՁԳՈՒՇԱՑՈՒՄ	
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ	Երևան, Նալբանդյան 130, www.mia.gov.am/
«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	Երևան, Տիգրան Մեծի 17, www.aspu.am
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ	Երևան, Մ. Մկրտչյան 5/1, www.aipo.am/hy
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄՈԼՈՐԵՑՈՒՄ ՏՈՒԳԱՆՔ	
«ԱՅ ՔՅՈՒ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	Երևան, Դավիթաշեն 1 թղմ., շ 43, բն.7, www.iqcenter.am/arm/
«ԱՐԵՎԱՄԱՆՈՒԿ» ՍՊԸ	Երևան, Հանրապետության փ., շ 76/2, բն. տարածք 1
Ա/Ձ ԿԱՐԵՆ ՖԱՄԲՈՒԿՅԱՆ	Երևան, Մոլդովական փ. 25 շ., բն. 36
«Ա.ԳԻՏ» ՍՊԸ	Երևան, Դեղատան փ., շ 10, բն. 8
«ՆԱՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Երևան, Արշակունյաց 206
«ԳԱԶ-ՊՐՈՊԱՆ» ՍՊԸ	Երևան, Տիչինայի փ., 26
«ԷԴՈ-ՍԱՐՈՒԽ» ՍՊԸ	Երևան, Լենինգրադյան փ., շ 48/1, բն. 24
«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՀԱՐՈՅԱՆՆԵՐ» ՍՊԸ	Երևան, Կոմիտասի պող., 36/7, բն. 4/1
«ՅՈՒՏԱՔՍԻ» ՍՊԸ	Երևան, Ա. Բակունցի 2 նրբ., շ 6, բն. 9, www.u.taxi
Ա/Ձ ԼՈՒՍԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ	Մասիս, Նոր թաղամաս, շ 20, բն. 41
«ԱՐԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ	Երևան, Ա. Խաչատրյան փ., շ 20, բն. 1, www.arasfood.am/hy
«ԼՈՒՍ. Մ.» ՍՊԸ	Երևան, Վ. Համբարձումյան, 8/1
«ՏԻԳ ԳՐՈՒՊ ՕԻԼ» ՍՊԸ	Արարատ, Շիրվանզադեի, տ. 19

«ԷԴԳԱՐ ՕԻԼ» ՍՊԸ	Երևան, Գ. Ջահուկյան փ., տ. 47
««ԾԻԱԾԱՆ» ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	Երևան, Բագրատունյանց 3-րդ նրբանցք, տ. 24
Ա/Ձ ՆՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	Երևան, Գ. ՆԺԴԵՀԻ փ., շ 45, 21 բն.
«ԳԼՈԲԱԼ ՇԻՓՓԻՆԳ» ՍՊԸ	Երևան, Հր. Քոչարի փ., տ 44/53, am.globbing.com/hy
«ՍԻԹԻ» ՍՊԸ	Երևան, Մալաթիա Սեբաստիայի փ., 143, www.yerevan-city.am
«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ	Երևան, Սարյան 22, www.haypost.am/am/
«ՄՈՆՏԵՍՍՈՐԻ.ԷՅԷՄ» ՍՊԸ	Երևան, Անդրանիկի փ., շ. 92, բն. 12
«ԲԻՈԿԱԹ» ՍՊԸ	Երևան, Հաղթանակի 1 նրբ., 1/10, https://biokat.am/hy
«ՀԱՅՓՈՍՏ ՅՈՒ ԷՍ ԷՅ ՔՈՐՊ.» ԿՈՐՊՈՐԱՑԻԱ ԵՎ «ՀԱՅՓՈՍՏ ՅՈՒ ԷՍ ԻՆՔ.» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԱՆՁԱՆՑ ԽՈՒՄԲ	Երևան, Սարյան 22, www.haypost.am/am/, www.berber.am/am
«ԼԵՎ 7» ՍՊԸ	Երևան, Գերցենի փ., տ. 4/1
«ՎԻԼ ՖՈՒԴ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Հրազդան, Վանատուր 1, www.vilfood.am
«ԱՐՄ-ՄԻԼԿ» ՍՊԸ	Վերին Արտաշատ, Գնունու փ., տ. 26,
«ԱՐԱՔՍ-2» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ	Գեղարքունիք, գ. Ակունք, Շահումյան 44, www.ecokat.am/
«ԷԿՈՏԱՎՈՒՇ» ՍՊԸ	Երևան, Մաշտոցի պ., շ 5ա, բն. 11
«ՀԱՅՐԵՆՅԱՑ ԲԱՐԻՔՆԵՐ» ՍՊԸ	Երևան, Նուբարաշեն 11 փ.14/1
«ԱՐԱՔՍ ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱ» ՓԲԸ	Ջրարբի, Ջրառատի Թ/Ֆ, www.araxpf.am/
«ՌԱԳՄԱԿ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ	Երևան, Արին-Բերդ 15, www.ragmak.am
«ՆՈՐ ԶՈՎՔ» ՍՊԸ	Երևան, Հանրապետության փ., 71, www.norzovq.am/
«ԲԵԼԼԵԶԶԱ» ՍՊԸ	Երևան, Աբովյան 9 շենք
«ՕՆԷՔՍ» ՍՊԸ	Երևան, Տերյան փ., շ 105/1, www.onex.am/
«ԼՈՒԼԱ» ՍՊԸ	Երևան, Զաքիյան փ., շ 3, բն. 54
«ՄԵԳԱ ՖՈՒԴ» ՍՊԸ	Երևան, Արշակունյաց պ. 25/1, www.megafood.am/am
«ՖԱՄԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Երևան, Մաշտոցի պողոտա, շ 18, 52 շին, www.fami.am
Ա/Ձ ԿԱՐԵՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ	Երևան, Ջրվեժ Մայակ, շ 33, բն. 21
«ԷՔՍՊՈՐՏ ՕՅԼ» ՍՊԸ	Երևան, Շիրակի 47
«ԼՈՒՍՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	Երևան, Ադոնցի փ., շ. 6, բն. 333, www.chinarsupermarket.am
«ԷՎՐԻԿԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Երևան, Շարուրի փ., 28/2, բն. 58
«ԲՐԵՆԴԼԻԴԵՐ» ՀՁ ՍՊԸ	Երևան, Ն. Շենգավիթ 11 փ., 1/14, www.brandleader.am
«ՊԱՄ ԸՆՏԱՆԻՔ» ՍՊԸ	Երևան, Տիգրան Մեծի փ., շ 54ա, բն. 10, www.pam.am
«ԱԼՖԱԲԵԹ» ՍՊԸ	Երևան, Ա. Խաչատրյան փ., 6

«ՄԻԼՔ ԱՔ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ	Երևան, Կոմիտասի պողոտա, շ 3, բն. 46
«ԴՈՒՍՏՐ ՄԱՐԻԱՆՆԱ» ՍՊԸ	Երևան, Հաղթանակ 6 փ., տ 17, www.mariannadairy.com
«ԲԻ ԵՎ ՋԻ ՖՈՒԴ» ՍՊԸ	Երևան, Կորյունի 13
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ	
Ա/Ձ ՆՈՒՆԵ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ	Երևան, Գայի պ., շ 23, բն. 3-4
Ա/Ձ ՆԱՐԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ	Արգավանդ, Կենտրոնական փ., տ 71
«ԷՍ ԸՆԴ ԷՍ» ՍՊԸ	Երևան, Ա. Խաչատրյան, շ. 15, բն. 34
«ՏՈՒՆՏՈՒՆԻԿ» ՍՊԸ	Երևան, Նորաշեն թղմ., շ 12, բն. 70
«ՄԱՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Երևան, Մադոյան փ., տ 14
«ԵՐԵՎԱՆ ՍԻԹԻ ԻՆՖՈ» ՍՊԸ	(Երևան, Մառի, թիվ 9)
Ա/Ձ ԱՐՍԵՆ ԲԱՅՐԱՄՅԱՆ	Իջևան, Անկախության փ., շ 26, բն. 14
«ԳՐԵՏԵԼԻԿՆԵՐ» ՍՊԸ	Երևան, Ն. Շենգավիթ 11 փ., տ 40/2
«Մ. ՍԱՐԳՍՅԱՆ» ՍՊԸ	Երևան, Անդրանիկի փ., շ 19, բն. 72
«ՀԵՓԻ ՍՄԱՅԼ ՔԻԴՍ» ՍՊԸ	Երևան, Մանուշյան փ., 48
Ա/Ձ ՄԱՆՈՒՇ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ	Վանաձոր, Տարոն-4 Մեք., շ 37, բն.12
Ա/Ձ ԼԻԼԻԹ ԶԱՐԳԱՐՅԱՆ	Դիլիջան, 1 փ., տ 46
«Ա Է Մ» ՍՊԸ	Երևան, Պռոշյան փ. 1 փակուղի, 20/11
«ՍՄԱՐԹ ԲԵՅԲԻՍ» ՍՊԸ	Գյումրի, Շիրակացու փ., Մանկապարտեզ 85/1
«ԿԻԴՍ ԼԵՆԴ» ՍՊԸ	Գյումրի, Պ. Սեվակի փ., օբյեկտ 8/4
Ա/Ձ ԱՐԹՈՒՐ ԱՂԵԿՅԱՆ	Երևան, Խաղաղ Դոնի փ., տ 23/6
Ա/Ձ ԳՈՀԱՐ ՍԱՖԱՐՅԱՆ	Փամբակ, 1 փ., տ 24
Ա/Ձ ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ	Վանաձոր, Տարոն 1 փ., շ 1, բն. 13
«ՄԱՆՉ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ» ՍՊԸ	Երևան, Հրաչյա Քոչար 196
«ԲԵՅԲԻ ՍԻՐԻ» ՍՊԸ	Գյումրի, Միհեր Մկրտչյան փ., շ 61/1
«ՔԻԴԻ ՍԻԹԻ» ՍՊԸ	Վանաձոր, Աբովյան փ., տ 21
«ՄԻԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	Երևան, Ն. Չարբախ 5 փ., 2 նրբ, բն. 2
«ՓՈՔՐԵՐԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ	Երևան, Նոր Արեշ 11 փ., տ 144
Ա/Ձ ՍՈՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ	Վանաձոր, Տարոն 4 Կանակայի, շ 41, բն. 5
«ԱԼՎԻՆԿԱ 88» ՍՊԸ	Երևան, Ահարոնյան փ., 45/2
«ԼԻԴԵՐ ԼԵՆԴ» ՍՊԸ	Երևան, Նազարբեկյան փ., տ 15/8

«ՄԱՆԿԱՆ ԺՊԻՏ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՍՊԸ	Երևան, Բագրեվանդի փ., 2/8 տ.
«ՔԱՐՀԱՆՅԱՆ ԴՊՐՈՑ» ՍՊԸ	Վանաձոր, Թատերական փ., շ 5
««ՓՈՔՐԻԿ ԴՐԱԽՏ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	Երևան, Բաշինջաղյան փ., 171 շ., բն. 35
«ԱՐԵՎ ՕՐ» ՍՊԸ	Երևան, Շարուրի փ., շ 17, բն. 17
Ա/Ձ ԱՆՆԱ ԻԼԱՆՋՅԱՆ	Երևան, Բաշինջաղյան փ., շ 182, բն. 31
«ԷՄ5 ՍԵՆՍԻՍ» ՍՊԸ	Առինջ, Պ. Սեվակի թաղ. 17 փ., 55 շին.
«ԱՍՏՂԻԿ ՍԹԱՌ» ՍՊԸ	Երևան, Մանանդյան փ., շ 34, բն.52
Ա/Ձ ՏԻԳՐԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ	Երևան, Դավթաշեն 2 թղմ., շ 2, բն. 24
«ԱՐՓԻԱՐ ՔԻԴԱՍ» ՍՊԸ	Երևան, Փափազյան փ., 22/3
«ԻԲՈՒԿԱ» ՍՊԸ	Երևան, Խուդյակովի 1 նրբ., տ 1
«ԶԻԼԻՆԱ» ՍՊԸ	Երևան, Շինարարների փ., տ 26, բն. 30
«ՔԻԴԱՍ ՍՏՈՒԴԻՈ ԳԱՍՊԱՐՅԱՆ» ՍՊԸ	Երևան, Սունդուկյան փ., 18/1
«ՓՈՔՐԻԿ ՊԱՐՏԵԶ» ՍՊԸ	Երևան, Տպագրիչների փ., 16
«ԱԼՅԱՆԿԱ» ՍՊԸ	Մասիս, Դպրոցականների փ., 16/17
«ԷԼԻՏ ՊԱՐՏԵԶ» ՍՊԸ	Գյումրի, Պուշկինի փ., տ 50
«ԳՄ 7» ՍՊԸ	Երևան, Մարշալ Բաբաջանյան փ., տ 42/1
Ա/Ձ ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ	Երևան, Փափազյան փ., շ 16ա, բն. 9
«ԲԱՐԵՎ, ԵՍ ԵԿԱ» ՍՊԸ	Երևան, Նոր Արեշ, 31/18
«ԱՐԵՎԻ ՇՈՂԵՐ» ՍՊԸ	Երևան, Հանրապետության փ., շ 46, բն. 14ա
Ա/Ձ ՇՈՒՇԱՆ ԵՐԻՑՅԱՆ	Երևան, Ծարավ Աղբյուրի փ., շ 55/5, բն. 2
«ԲՈՂԲՈՋ ՔԻԴԱՍ» ՍՊԸ	Աբովյան, 2-րդ միկրոշրջան թիվ, 2/189/3
«ԼՈՒՍԵՐ» ՍՊԸ	Գյումրի, Անի թղմ. 9 փ., շ 5ա, բն. 12
«ՄԱԼԻՄԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	Երևան, Անդրանիկի փ., շ 10/1, բն. 57
«ԱՍՏՂԻԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԿ» ՍՊԸ	Երևան, Չեխով, -- 1 փակուղի, տուն 11
«ԳԻՏՈՒՆ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր 37 փ., 3/2, բն. 201
Ա/Ձ ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	Երևան, Վիլնյուսի փ., շ 85, բն. 72
Ա/Ձ ԼԻԱՆԱ ԶՈԼԿԻՆԱ	Սևան, Նաիրյան փ., շ 3, բն. 36
Ա/Ձ ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ	ՄԱՐՏԻՐՈՍ, 5 փ., տ 32
«ՄՈՒՐՋԻԼԿԱ» ՍՊԸ	Երևան, Երվանդ Քոչարի փ., շ 21, բն. 69
«ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Երևան, Արգիշտի փողոց, 4/1, www.viva.am
«ԼՕԼՕ» ՍՊԸ	Երևան, Տիգրան Մեծի նրբ., 5/3 տ., www.lolo.am/

«ՀԱՄՈՎ ԲԱԼԻԿ» ՍՊԸ	Երևան, Կոմիտաս փ., շ 31, բն. տարածք 40
«ԻՆԴԻԳԱՄԻ» ՍՊԸ	Երևան, Տիգրան Մեծի փ., 28 շ., բն. 42ա, www.indigami.am
«ԷԼ ԷՅՋ» ՍՊԸ	Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, շ 2/9, բն. 1
««ԱԿՆԻԿ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	Երևան, Անդրանիկի փ., 54, www.aknik.am/
«ՄԻՆԻՈՆ» ՍՊԸ	Երևան, Հալաբյան փ., շ 15, բն. 5
«ԻՐԻՆԱՍ ՖԵՄԻԼԻ» ՍՊԸ	Երևան, Սարմենի փ., տ 10
«ՀՐԱՇԱՄԱՆՈՒԿ» ՍՊԸ	Երևան, Նանսենի 20/1
«ՊԻՆԳՎԻՆԱՇԵՆ» ՍՊԸ	Երևան, Սարմենի փ., տ. 49
«ԱՆՏՈՇԿԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	Երևան, Սունդուկյան փ., տ. 52
«ՔԻՆԳ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ	Երևան, Կոմիտասի պ., շ 22, բն. 45
«ՍՄԱՅԼ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ	Երևան, Թոթովենցի փ, 2/1 շ., բն. 1
«ՍԻԹԻ» ՍՊԸ	Երևան, Մալաթիա Սեբաստիայի փ., 143, www.yerevan-city.am
«ԳՈԼԴԵՆ ԱՈՒՐԱ» ՍՊԸ	Երևան, Լվովյան փ., 13, բն. 88
Ա/Ձ ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ	Երևան, Նորագավիթ 10 փ., տ 2/2
«ՀԱՐ-ՄԱ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ	Արարատ, Գեղանիստ, 5 փ., 22
«ՄԱՅՐԻԿ ՖՈՒԴ» ՍՊԸ	Երևան, Ավան 5 փ., տ 38/1
«ՏԴ ԻՄՊԵՐԻՈՒՄ» ՍՊԸ	Երևան, Ադոնցի փ., տ 8, բն. 22
«ԿԵՍ ԳԻՆ» ՍՊԸ	Երևան, Դավթաշեն 2 թղմ., շ 28, բն. 10
«ԲՐԵՆԴԼԻԴԵՐ» ՀՁ ՍՊԸ	Երևան, Ն. Շենգավիթ 11 փ., 1/14, www.brandleader.am
Ա/Ձ ԱԼԻՍԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	Երևան, Արշակունյաց պ., շ 30, բն. 93
«ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԵԾԱՆԻՎՆԵՐ» ՍՊԸ	Լոռի, Օձուն, 1փ, տ 61/2
«Լ.Դ.Լ.» ՍՊԸ	Երևան, Զավարյան 57/19, բն. 94
ՇՓՈԹՈՒԹՅՈՒՆ ՏՈՒԳԱՆՔ	
«ԾՈՎԱԾՈՑ» ՍՊԸ	Սևան, Սևանեցու 9-6
«ԴԱԼԻԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Երևան, Կոմիտասի պ., 44/2
«ԱԼԿՈ ԳԱՐԴԵՆ» ՍՊԸ	Երևան, Հ. Հովհաննիսյան փ., տ. 54
Ա/Ձ ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏՉՅԱՆ	Երևան, Օդեսայի փ., տ 40
«ԱԼԵՔՍ 33» ՍՊԸ	Արմավիր, Վաղարշապատ, Մանուշյան փ. 4/4

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ	
«ՎԱՆ ՎԵՅ» ՍՊԸ	Երևան, Բաշինջաղյան փող., 198 շենք
Ա/Ձ ՄԱԿԻ ՄՈՒՐԱՏՅԱՆ	Երևան, Պուշկինի փ., 43 շ., բն. 81
«ՍԱՍ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Երևան, Արշակունյաց պող., 11/1 շենք, www.sasgroup.am
Ա/Ձ ՅԱԿՈԲ ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ	Երևան, Սողոմոն Տարոնցի նրբ., շ 6, բն. 10
Ա/Ձ ՅՈՒԼԻԱՆԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ	Երևան, Չեռնիշեվսկու փ., տ. 29
ԱՆՀԱՐԿԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ	
«ԻՄՍԻՐՈՒՆ» ՓԲԸ	Երևան, Բաղրամյան պ., շ 2, բն. 88 տարածք, www.imsirun.am
«ԼԱԿԻ ԴԵՍԵՐՏ» ՍՊԸ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ԼԻԼԻԹ ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՆՁԱՆՑ ԽՈՒՄԲ	Երևան, Աբովյան 13, 34, www.laki.am
ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ՏՈՒԳԱՆՔ	
««ԴԻՋԻԹԵՅՆ» ՍՊԸ, «ՏՈՏՈ ՍՊՈՐՏ» ՍՊԸ-ՆԵՐ, ««ՆՈԱ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ԱՆՁԱՆՑ ԽՈՒՄԲ	Երևան, Ծովակալ Իսակովի պող., 15/3 շենք, www.digitain.com/, Երևան, Ն Ադոնցի փ., 4/3, www.gosport.fm/ Երևան, Բրյուսովի փող., 6 շենք
«ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՓԲԸ, «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ, «ՖԱՍԹ ՇԻՖԹ» ՍՊԸ ԵՎ «ԻՄԵՋԻՆ ՀԱԲ ԲԱՅ ՍՈՖԹ» ՍՊԸ» ԱՆՁԱՆՑ ԽՈՒՄԲ	Երևան, Գ.Հովսեփյան փ., թիվ 20, www.softconstruct.com, www.fastmedia.am/hy, www.fastshift.am

2024թ. 1034-11001 «Տնտեսական մրցակցության պաշտպանություն» ծրագրի «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում քաղաքականության մշակում վերահսկողություն» միջոցառում (հազար ՀՀ դրամ)

N	Անվանումը	Տնտեսագիտական հոդված	Ճշտված պլան	Փաստացի դրամարկղային ծախս	Բյուջեի կատարման %
	Ընթացիկ ծախսեր		597,012.1	588,899.5	98.6
1	Աշխատողների աշատավարձ և հավելավճար	**4111**	437,183.8	437,183.8	100.0
2	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարումներ	**4112**	41,135.7	41,135.7	100.0
3	Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	**4113**	26,833.3	26,833.3	100.0
4	Էներգետիկ ծառայություններ	**4212**	7,893.7	7,776.8	98.5
5	Կապի ծառայություններ	**4214**	4,077.3	2,977.6	73.0
6	Ապահովագրական ծախսեր	**4215**	160.0	66.0	41.3
7	Գույքի և սարքավորումների վարձակալություն	**4216**	44,527.8	44,527.8	100.0
8	Ներքին գործուղումներ	**4221**	455.5	191.8	42.1
9	Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	**4222**	8,772.4	8,525.5	97.2
10	Համակարգչային ծառայություններ	**4232**	2,127.0	1,836.0	86.3
11	Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	**4233**	396.0	396.0	100.0

N	Անվանումը	Տնտեսագիտական հոդված	Ճշտված պլան	Փաստացի դրամարկղային ծախս	Բյուջեի կատարման %
12	Տեղեկատվական ծառայություններ	**4234**	950.0	950.0	100.0
13	Կառավարչական ծառայություններ	**4235**	2,388.0	0.0	0.0
14	Ներկայացուցչական ծախսեր	**4237**	1,909.1	1,811.5	94.9
15	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	**4239**	7,838.0	5,260.2	67.1
16	Մեքենաների ընթացիկ նորոգում և պահպանում	**4252**	3,826.0	3,458.4	90.4
17	Գրասենյակային նյութեր և հագուստ	**4261**	1,154.3	1,032.0	89.4
18	Տրանսպորտային նյութեր	**4264**	2,621.0	2,621.0	100.0
19	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	**4267**	1,193.2	1,066.9	89.4
20	Պարտադիր վճարումներ	**4823**	1,570.1	1,249.2	79.6

2024թ. 1034-31002 «Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին ամրացված վարչական շենքի վերակառուցման նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում» միջոցառում (հազար ՀՀ դրամ)

N	Անվանումը	Տնտեսագիտական հոդված	Ճշտված պլան	Փաստացի դրամարկղային ծախս	Բյուջեի կատարման %
	Ընթացիկ ծախսեր		142,000.0	15,300.0	10.8
1	Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում	**5113**	126,000.0	0.0	0.0
2	Նախագծա-հետազոտական ծախսեր	**5134**	16,000.0	15,300.0	95.6

11.3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԳՐԱՖԻԿ



ՀՀ, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4
Հեռ.՝ (+37460) 830-840
Էլ. փոստ՝ info@competition.am
Կայք՝ https://competition.am/hy/
Ֆեյսբուքյան էջ՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողով